

ՔՐՈՆԵԹ ՇԱՐՈՒԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԸ ՇԵՇՏԵՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԵՐԿԻՍՕՍՈՒԹԵԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Հիսուսային Մեթոդի երեսփոխանական մասնակի ընտրություններին ետք երեկ Քրոնեթ Շարուանի հանդիպումը կայացուց նիստ մը քննարկելու համար ընտրություններուն մասնավորապես ինչպիսիք են:

Նիստին ներկայ գտնուող հանդիպումի բոլոր անդամները շեշտեցին ընդդիմութեան միասնականութիւնը եւ հանդիպումին ոչ - կուսակցական բնոյթը:

Նիստին արծարծուեցաւ անցեալ շաբթուան ընթացքին երեսփոխան Նեսիպ Լահուտի այցելութիւնը նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ այդ այցելութեան լոյսին տակ որոշուեցաւ ընդդիմութեան եւ պետութեան միջեւ ստեղծել երկխօսութիւն մը. քննարկելու համար շաբթ մը անլոյծ հարցեր:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

ՊՈՒՇ ԶՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ՇԱՐՈՆԻ

Իսրայէլի վարչապետ Արիէ Շարուն երեկ արտեց Միացեալ Նահանգներ այցելութիւնը, որուն ընթացքին յաջողեցաւ անգամ մը եւս ապահովել նախագահ ձորձ Պուշի զօրակցութիւնը: Երկուշաբթի օրուան տեսակցութեան ատարին, Պուշ յայտարարած էր, որ Իսրայէլ ինքնապաշտպանութեան իրաւունք ունի պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն դէմ: Իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատար մը, որ Շարունի կ'ընկերակցի, ըսաւ, որ Իսրայէլ իր նպատակին հասաւ Ուաշինկթըն այցելութեամբ:

Պաղեստինեան կառավարութեան անդամ Սաէպ Ռաբաթա ղատապարտեց Պուշի յայտարարութիւնը, դիտել տալով, որ անիկա յուսախաբութիւն կը պատճառէ բոլոր անոնց, որոնք խաղաղութիւն կ'ուզեն եւ կ'աշխատին անոր համար:

Սպիտակ Տան բանբեր Արի Տայշըր ըսաւ, որ Պուշ Շարունէն պահանջած է խաղաղութեան հասնելու համար որդեգրել քաղաքական ընտրանքը: Սակայն Պուշ մամլոյ ասուլիսին ընթացքին ըսած էր, որ Արաբաք տակաւին շատ բան ունի ընելիք խաղաղութեան խորհրդածողով է մը առաջ: Ան անցուցած էր, թէ Շարուն պատրաստ է քննարկելու խաղաղութիւն հաստատելու պայմանները: Պուշ յայտնած էր նաեւ, որ Շարունի հետ քննարկած է անհրաժեշտ բարեկարգումները, զորս պէտք է կիրարկէ պաղեստինեան իշխանութիւնը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՐԲԻՍ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՏԱՊԱԼԻ

ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ՊԱՀՉԵԼԻ

ԱՆԳԱՐԱ, 11 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուրքիոյ մէջ աջակողմեան փոխ վարչապետ Տեւլէթ Պահչելի Երեքշաբթի օր չորս օրուան ընթացքին երկրորդ անգամ ըլլալով զգուշացուց, թէ կառավարական ընկերակցութիւնը կրնայ տապալիլ՝ հարուածելով ելեմտական շուկաները, որոնք արդէն իսկ կանխահամ ընտրութիւններու մղձականքը կ'ապրին:

Ազգային Գործի կուսակցութեան ղեկավարը՝ Պահչելի, զայրոյթ արտայայտած է կառավարական ընկերակցութեան մէջ իր երկու գործակիցներուն հանդէպ՝ յայտնելով, որ անոնք իր կուսակցութիւնը կը ներկայացնեն իբրեւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը խափանող ուժ մը:

Ուրբաթ օր, Պահչելի յայտնած էր, որ կ'ընդդիմանայ մահապիճիկ եւ քրտերէնի դէմ դրուած արգելքները ջնջելու գաղափարին: Անոնք պայման են Ե. Միութեան պահանջներուն գոհացում տալու համար՝ անդամակցութեան գծով բանակցութեանց:

Սակայն ըսած է ան, կառավարական տագնապ մը պիտի չպատճառէ «այս անգամ» եթէ ընկերակցութեան գործակիցները օրէնսդրութիւնը մղեն, որ վաւերացուի խորհրդարանին կողմէ, ընդլրմապարտ:

Թեան օժանդակութեամբ:

Պահչելի Երկուշաբթի օր կառավարական նիստ մը զլիսաւորած է՝ ինչեւեւ թի բացակայութեան: Այս վերջինին մէջ ամսուան հիւանդութիւնը թափ տուած է մտավախութեանց, թէ կրնան կայացուիլ կանխահամ ընտրութիւններ՝ որոնք տնտեսական վերականգնումին կրնան վնասել:

Իր կուսակցութեան անդամ երեսփոխաններուն խօսելով՝ Պահչելի շեշտած է, որ եթէ դաշնակիցները հետեւողականորէն ընդդիմադրութեան դիմեն, ապա նոր ընէ:

Կառավարութիւն մը պէտք է կազմուի:

ՆԱԽԱԳԱՐԸ ՊՈՒՇԻ ՓՈԽԱՐԻՆԷ ԿԱՐՉԱՊԵՏԸ

Նախագահ Աճմէթ Նեքետէթ Սեզըրի գրասենեակը երէկ հաղորդագրութեան մը մէջ յայտնած է, թէ Սեզըր այս ամսուան վերջերուն Սպանիոյ մէջ կայանալիք Ե. Միութեան վեհաժողովին պիտի մասնակցի՝ փոխարինելով հիւանդ վարչապետը:

Բժիշկները անոր հրահանգած են, որ յաւելեալ 2էն 3 շաբաթ հանգիստ ընէ:

ՄԱՀԱՅՈՒ ՈՂՈՂՈՒՄՆԵՐ՝ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԿԵԳՐ. ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ՊԵՅՅԻՆ, 11 (ՌՈՅԹԸՐԶ).- Զինաստանի կեղտոտական ու արեւմտեան շրջանները հարուած հեղեղն ու ողողումը խլած է աւելի քան 38 կոտ, մինչ հարիւր ուրիշներ կորսուած կը նկատուին, հաղորդեցին լրատուական պետական աղբիւրներ:

Շաբաթավերջին Չինաստանը հարուածած տեղատարափ անձրեւը կարգ մը շրջաններու մէջ ողողած է գիւղեր ու քաղաքներ: Հեղեղը քանդած է աւելի քան 1400 բնակարաններ անպատասպար ձգելով հազարաւոր չինացիներ: Ողողումը փճացուցած է նաեւ աւելի քան հինգ հարիւր հեկտար մշակուած հող:

ՆԱԽԱԳԱՐԸ ԼԱՀՈՒՏ ԲՈՒՍԻԱՅԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ...

Շարունակուած Ա. Էջէն

մթնոլորտը կը շահագործէ շարունակելու իր թշնամական եւ յարձակողապաշտ քաղաքականութիւնը:

Նախագահը ռուս պաշտօնատարին ներկայացուց Պէյրութի արաբական վեհաժողովի քննարկումներուն տիրած մթնոլորտը, որ յանգեցաւ խաղաղութեան արաբական նախաձեռնութեան որդեգրումին, շեշտելով, որ Լիբանանի պնդումով այդ որոշումին մաս կ'պատկերէ պաղեստինցի գաղթականներու Լիբանանի մէջ բնակեցումին մերժումն ու անոնց տունդարձի իրաւունքի պահանջը: Ան ընդգծեց որ այս նախաձեռնութիւնը կարելու առիթ մըն է, զոր միջազգային ընտանիքը պէտք է արդիւնաւորէ շրջանին ներս խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու համար, մանաւանդ որ այս նախաձեռնութիւնը ողջունած են անջնջութիւն ունեցող բոլոր կողմերը, բացառութեամբ Իսրայէլի վարչապետին, որ նախաձեռնութեան յայտարարութեան ժամեր ետք շղթայապէս լայնածիր յարձակում մը՝ ձախողութեան մատնելու համար պայն:

Վտովին ներկայացուց Միջին Արեւելքը անելն դուրս բերելու համար Ռուսիոյ ճիգերը, զորս ան կը տանի գործակցաբար Միացեալ Նահանգներու, Եւրոպական Միութեան եւ ՄԱԿի հետ, բիրեղացնելու համար շրջանի խաղաղութեան նուիրուած միջազգային ժողովի մը գծով պատկերացումը: Ան վերահաստատեց, որ ապարդիւն են փնտրական լուծում պարտադրելու փորձերը, եւ պէտք է ձգտիլ խաղաղ եւ ամբողջական լուծումի, հիմնուելով միջազգային որոշումներուն, Մատրիտի վեհաժողովի սկզբունքներուն եւ Պէյրութի վեհաժողովին յայտարարուած արաբական նախաձեռնութեան վրայ:

Չուգահեռաբար պէտք է լուծել ապահովական, քաղաքական եւ տնտեսական հարցերը, որպէսզի Միջին Արեւելքի մէջ ստեղծուի նոր եւ բնականոն յարաբերութիւններու վիճակ, որուն ծիրին ներս կը գոյակցին պաղեստինեան եւ Իսրայէլեան պետութիւնները, ըսաւ ան, ընդգծելով, որ պաղեստինցի ժողովուրդը պիտի ընտրէ իր ներկայացուցիչը:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

11 Յունիսին լոյս տեսած լիբանանեան օրաթերթերը իրենց առաջին էջով տակաւին կը շարունակէին յուսարձակ տակ անուն Մեթոդի երեսփոխանական մասնակի ընտրություններուն անջնջող վերջին իրադարձութիւնները:

Թերթերը ընդհանրապէս կը նշեն, թէ ընտրություններին 8 օր ետք կապրիէլ Մըր յաղթական յայտարարուած է: «Անուար»-ի համաձայն, տակաւին կան անձեր, ինչպէս երեսփոխաններ՝ Նեսիպ Լահուտ եւ Փիեռ ժըմայէլ, որոնք նախարարաց խորհուրդին կը պահանջեն ներքին գործոց նախարարի պաշտօնակրկումը, որովհետեւ, ըստ անոնց, լիբանանցիները կորսնցուցած են իրենց վստահութիւնը Մըրի նկատմամբ:

Թերթերը առաջին էջի լուրերու կարգին կ'անդրադառնան 15 տարի Իսրայէլի մէջ արգելափակուած լիբանանցի գերի Մոհամէտ Պարպաուիի պատ արձակման եւ Լիբանան վերադարձին: Թերթերուն համաձայն, անոր պատ արձակումը գերիներու թղթածրարի հետապնդման արգասիքներուն առաջինն է:

Միջազգային մակարդակի վրայ օրաթերթերը կը հաղորդեն Միացեալ Նահանգներու մէջ «Քայլտա»-ի անդամ ամերիկացիի մը ձերբակալութեան լուրը: Ըստ Ուաշինկթընի, ան փորձած է շողավարակ ռուբ մը արձակել Ուաշինկթընի վրայ: Թերթերը նաեւ կ'անդրադառնան Սպիտակ Տան մէջ կայացած Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշի եւ Իսրայէլի վարչապետ Արիէ Շարունի հանդիպումին: «Սաֆիր» այս մասին կը գրէր. «Պուշ եւ Շարուն պաղեստինեան բանակցություններ գոյութիւն չունին»: «Նախար»-ի համաձայն, Պուշ ըսած է, թէ ոչ ոք կը վստահի պաղեստինեան նոր կառավարութեան եւ պայմանները տակաւին չեն հասունցած խորհրդածողով մը գումարելու համար: «Անուար» պաղեստինեան հարցին մասին կը գրէ, թէ «մինչ Պուշ կը յարձակուի պաղեստինեան իշխանութեան վրայ, Իսրայէլեան ուժերը պաշարուած կը պահեն Արաբաթի կեղտոտեղին»:

Ներքին էջերով թերթերը յուսարձակ տակ կ'անուն Մեթոդի ընտրություններու վերջնական արդիւնքին յաջորդող կեցուածքները, տեսակետները եւ իրադարձութիւնները: Թերթերը նաեւ տակաւին կը հնչեցնեն Լիբանանի ընտրութեան պակասման եւ անոր մէջ գտնուող ձուկերուն մահուան պատճառով: Այս ապակասումը նաեւ շնչառական հարցեր պատճառած է շրջանի բնակչութեան. շատեր լրջօրէն անհանգստացած են: Անոնք նաեւ ակնարկած են վերջին քանի մը օրերուն Լիբանանի մէջ տիրող տաքին եւ անոր պատճառած 190 շրջանի մէջ բռնկած հրդեհներուն:

«Պէյրութի մէջ կայացած ակնապերժման անջնջող դասախօսութեան ընթացքին փնտրական պատասխանատուն ըսած է, թէ Լիբանանի մէջ գտնուող 2700 ակնուած շրջաններուն 500ը մաքրուած է», կը գրէին թերթերը: Լիբանանեան օրաթերթերը նաեւ կ'անդրադառնան Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի մահուան Բ. տարելիցին առիթով կայացած ձեռնարկներուն եւ իշատակի հանդիսութիւններուն:

«Անուար»-ի ներքին էջերով կը յայտնէր, թէ Սուրիոյ մէջ Չէյլուի ամբարտակին փլուզման պատճառները քննելու համար Սուրիա մեկնած լիբանանեան պատուիրակութիւնը վերադարձած է եւ իր տեղեկագիրը յանձնած պատասխանատուներուն:

Wedding lists at Galerie Vanlian, you will surely lose your mind...

Galerie Vanlian HOME & TRENDS

THE REVOLUTIONARY JAPANESE Air CONDITIONERS

DYNAMIC made in Japan

I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

IGOL MOTOR OIL FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՅԱՆՈՒՆ ԲԱՐԳԱԻԱՃԱՄԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԼԻՒՐԱԲ ԱՆՂԱՄԻ Ը. Յ. Դ. ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻՆ ԱՌԻՈՎ

Մամուլը հարողած է արդէն, որ 1 Յունիս 2002ին, Քաղաքականության (Մարտ) մէջ գումարուած իր ժողովին, Ընկերվար Միջազգայնականի խորհուրդը միաձայնութեամբ որոշեց ընդունել լիբրա անդամի կարգավիճակ ստանալու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դիմումին: Խորհուրդի ժողովը այսպիսով պաշտօնապէս իր համաձայնութիւնը յայտնեց SIFACI (Ընկերվար Միջազգայնականի ելեւմտական եւ կազմակերպական հարցերու յանձնախումբը, որուն վերապահուած է Ընկերվար Միջազգայնականի անդամակցութեան առնչուող հարցերու վճարահատուածը) կողմէ նախապէս տրուած դրական յանձնարարութեան՝ Հ. Յ. Դ. դիմումը ընդունելու վերաբերեալ: Կրմնայ, որ յառաջիկայ գարնանամուտին նախատեսուած իր նստաշրջանին, Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր համագումարը պաշտօնականացնէ արդէն իրողապէս հաստատուած լիբրա անդամի Հ. Յ. Դ. կարգավիճակը:

Մինչեւ 1907 թուականը կ'երկարի Դաշնակցութեան անդամակցութիւնը Ընկերվար Միջազգայնականին, որ քսաներորդ դարու սկզբնականութեան ծանօթ էր իբրեւ Բ. Միջազգայնական՝ համախմբելով առաւելաբար Եւրոպայի ընկերվարական կուսակցութիւններն ու ձախ թեքումով գաղափարական շարժումները: Առաջին Աշխարհամարտի ընթացքին, Բ. Միջազգայնականի անգամ կուսակցութիւնները յայտնուեցան հակամարտ ճամբաներու մէջ՝ բնականօրէն կանգնած ըլլալով սեփական ազգային պետականութեան պաշտպանի դիրքերուն վրայ, հակառակ պատերազմը մերժելու եւ ազգամիջեան համերաշխութեան ստատուելու իրենց բոլոր ճիգերուն: Այնուհետեւ, մինչեւ քսաներորդ դարու վերջնականները եւ առնել Ընկերվար Միջազգայնականի նախագահ գերմանացի Ուելի Պրանտի դէպի Արեւելք բացուելու նախաձեռնութեան յաջողութիւնը, Միջազգայնականը անցուց տատանումներու եւ խարխալումներու երկար շրջան մը՝ դիմագրւելով, յաջորդաբար, նախ խորհրդային ամբողջատարութեան եւ ապա ամերիկեան Ժաւապաշտութեան հինգերորդ շարասիւնը դառնալու վտանգները:

Պաշտպանութեան աստիճանական մեղմումով՝ Ընկերվար Միջազգայնականը քայլ առ քայլ ամրապնդեց իր տեղը միջազգային քաղաքականութեան բեմահարթակին վրայ: Մերժեց աջ եւ ծայրահեղ ձախ բեւեռացումի մատուցած մեծապետական աշխարհակարգը ու, փոխարէնը, պարզաց ազատութեան եւ ժողովրդավարութեան մէջ ընկերային արդար կարգերու հաստատման ու ընկերվարական տնտեսավարման համար պայքարող կուսակցութիւններն ու գաղափարական շարժումները համախմբելու դրօշը, որուն միանալու եկան իրենց ազգային անկախութեան տիրացած ու սեփական պետականութեան ընկերային արդար հիմեր կառուցելու ուղին ընտրած հարաւամերիկեան, ամերիկեան եւ ասիական երկիրներու նորակազմ կազմակերպութիւնները:

Վերակազմութեան այդ շրջանին է, որ Ընկերվար Միջազգայնականը վերանայումի ենթարկեց պատմական իր կառոյցը եւ որոշեց լիբրա անդամի կարգավիճակ տալ միայն անկախ երկիր կամ պետականութիւնի ներկայացնող կուսակցութիւններուն: Հետեւաբար, Դաշնակցութեան օրինակով տարագրութեան մէջ գործող եւ գերեզմարեալ ազգերը ներկայացնող, բայց պատմականօրէն Ընկերվար Միջազգայնականի լիբրա անդամ կուսակցութիւններ ստացան դիտորդ անդամի կարգավիճակ, որուն դէմ իբրեւ բողոք, 1970ականներու սկզբնականութեան, Դաշնակցութիւնը առկախեց իր անդամակցութիւնը: Թէեւ Հ. Յ. Դ. շարունակեց հիւրաբար ներկայ գտնուիլ Միջազգայնականի Ընդհանուր համագումարներուն, բայց միայն 1980ականներու երկրորդ կիսուն ձեռնարկեց իր անդամակցութիւնը վերականգնելու աշխատանքին: Այդ ուղղութեամբ դիմումները թափ հաւաքեցին յատկապէս 1990ի Օգոստոսին ետք, երբ Դաշնակցութիւնը պաշտօնապէս բացայայտեց իր կազմակերպական ներկայութիւնն ու գործունէութիւնը Հայաստանի մէջ: Իբրեւ աղափարի՝ Դաշնակցութիւնը կտրեց երկար ճամբայ Միջազգայնականի մէջ իր լիարժէք անդամակցութիւնը վերահաստատելու ուղղու-

թեամբ: Ի վերջոյ 1996ին Դաշնակցութիւնը ստացաւ դիտորդի, իսկ 1999ին խորհրդակցական անդամի կարգավիճակ, որուն ահա կը հետեւի Դաշնակցութեան վերընդունումը Միջազգայնականին մէջ իբրեւ լիբրա անդամ:

Քաղաքական այս յաջողութիւնը առաջին հերթին կու գայ շեշտելու, անգամ մը եւս, որ Հայաստանի անկախութեան եւ հայոց ազգային պետականութեան վերանուաճումով՝ դուները լայն բացուած են հայ ժողովուրդին առջեւ, որպէսզի կարենայ, անխոր բոլոր ճակատներէ կարենայ, անխոր բոլոր ճակատներէ կարենայ վրայ իր արժանի տեղը գրաւել միջազգային ընտանիքին մէջ: Իսկ Ընկերվար Միջազգայնականը այսօր կը հանդիսանայ աշխարհի չորս ցամաքամասերուն վրայ տարածուած ամէնէն ընդգրկուն, ազդեցիկ եւ միեւնոյն գաղափարին շուրջ համերաշխութիւն ու գորակցութիւն առաջադրող համախմբուած, որուն գլխաւոր ամպիւնն է թէ առանձին հարցերու կամ շրջաններու վրայ կեդրոնացած յանձնաժողովներու բեմերէն լսելի պէտք է դառնայ Հայաստանի եւ հայ ժողովուրդի ձայնը՝ արժանանալով անհրաժեշտ արձագանգի եւ աջակցութեան: Աւելին. յատկապէս խորհրդային ամբողջատիրութեան անփառունակ փլուզումէն ետք, Ընկերվար Միջազգայնականը դարձած է յուսալի միակ ժամադրավայրը բոլոր անոնց, որոնք ժառանգական կարգերու վրայ իրենց արդարեւ կայուն յարաբերութեանց հունով ընթացող եւ ընկերային շարաշահումներն ու բեւեռացումները խորացնող համաշխարհայնացման ներկայ յորձանուակի դէմ յանդիման՝ ճարմայական կարիքը ունին ընկերային արդարութեան համար պայքարող միջազգային միացումը ճակատի:

Յաջողութիւնը առանձնայատուկ նշանակութիւն ունի, բնականաբար, Դաշնակցութեան համար, որ միջազգային այս կարեւոր բեմահարթակէն ցարդ ընկնեցած իր գործունէութեան առջեւ նոր չորհրդաններ բանալու եւ աւելի ինքնավատան գործելու հնարաւորութիւնը կը ստանայ:

Չոյզ հարթութիւններու վրայ ծաւալուն աշխատանք կը սպասէ մեզ:

Առաջինը, անկասկած, հայ ժողովուրդի եւ հայոց պետականութեան իրաւունքներուն պաշտպանութիւնն է՝ Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչումի ու արդար հաստատման հարցին մինչեւ Արցախի ազատագրութեան իրաւական ամրագրումին եւ հասարակափոխութեան հիանդագին հանգրուան բոլորող մեր երկրին արագ ապգինման ի նպաստ ընկերվարական ընտանիքի օժանդակութիւնը ապահովելու ճամբով:

Երկրորդը մեր երկիրն ու ժողովուրդը ընկերային արդար կարգերով օժտելու անյետաձգելի հրամայականին ուղղութեամբ գործելու ասպարէզն է, որուն առջեւ Միջազգայնականը կը պարզէ աշխատանքի յարմարագոյն դաշտը: Ծակտապակից ժողովուրդներու եւ երկիրներու ընկերվարական փորձէն անհրաժեշտ դասերը պէտք է քաղել եւ ընդհանրապէս ընկերվարական շարժման այսօրուան որոնումներուն հետ քայլ պէտք է պահել, առանց մտահան ընելու, որ չկան պատրաստի դեղատոմսեր կամ այսպէս կոչուած ընդհանրական ու տիեզերական լուծումները միշտ չէ, որ կը պատշաճին կամ կրնան դրականօրէն արդիւնաւորուիլ: Հայաստանի ու հայութեան պարագային:

Այս բոլոր առումներով, Ընկերվար Միջազգայնականի լիբրա անդամի իր երբեմնի կարգավիճակը վերականգնելով, Դաշնակցութիւնը կը թեւակոխէ գործունէութեան նոր հանգրուան մը՝ յանուն Հայաստանի ու հայութեան համար բարգաւաճ ու արդար կենքի նուաճումին:

Խմբագրական «ԳՐՕՍԿ»-ի

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեանց պարագան՝ Գաղափարաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենյակը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ՄԵՍՐՈՊ ԱՐԲ. ԱՇՃԵԱՆԻ ՀԵՏ

Անցեալ շաբթուան ընթացքին «Ազդակ»-ի խմբագրութիւնը այցելեց Մեսրոպ արք. Աշճեան: Այս առիթէն օգտուելով, սրբազանին հետ ունեցանք ստորեւ տրուած շահեկան հարցազրոյց՝ իր հրատարակչական, հոգեւոր եւ բարեգործական ծրագիրներուն վերաբերեալ:



Հարունակութիւնն է համայնքին ծառայութեան մէջ: Շատ ուրախ եւ խանդավառ եմ այս երեւոյթով:

ՀԱՐՑՈՒՄ.- Սրբազան, յայտնի է Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին հրատարակչական աշխատանքը հովանաւորելու ձեռքով մտադրուած ճիշդը: Այս ծիրին մէջ ձեր եւ այլ բարեբարներու նախաձեռնութեամբ միջոցներով արդէն իսկ հրատարակուած է 180 ամուսն գիրք: Եթէ կարելի է խօսեցեք այս աշխատանքի մասին: Այս մարզին մէջ ինչ ե՞ն ձեր հետադարձ ծրագիրները:

ՊՏԱՍՈՒՄ.- Նախ շնորհակալ եմ այս առիթին համար: Ես մանկութենէս գիրքի եւ մամուլի աշխարհին մէջ եղած եմ: 10 տարեկանիս սկսած եմ, աշխատելով «Օլիմպիք փրէս»-ի մէջ, յետոյ ամառ մը եկայ «Ազդակ», եւ հանգուցեալ Հայկ Պալեանի քով աշխարհեցայ, անկէ ետք յաճախեցի Դպրեվանք: Ուրեմն, ես միշտ գիրքի աշխարհին մէջ ապրած եմ եւ ուր որ ալ եղած եմ, գիրքերով զբաղած եմ: Հիմա ալ կը գտնուիմ Հայաստան: Հոն բաւական աշխուժ հրատարակչական աշխատանքի ձեռնարկած եմ: Վերջին հինգ տարուան ընթացքին կարելի դարձած է մօտ 180 գիրքերու հրատարակութիւնը:

Տակաւին նոյն թիւով կը շարունակենք: Նպատակ է այն, որ հայ գիրքի տարածապի այս շրջանին, երբ յատկապէս Հայաստանի մէջ հեղինակներ, մեծ մտածողներ, աստուածաբաններ, վիպագիրներ իրենց տարիներու վաստակը ունին, պատրաստ գործեր ունին, բայց միջոց չունին հրատարակելու իրենց գիրքերը, օժանդակել իրենց, մինչեւ այն ժամանակ, երբ պետութիւնը եւ այլ կազմակերպութիւններ կարենան աւելի դիւրութեամբ մեր հեղինակներուն կիրքերը տպել:

Ճիշդ է որ հոգեւորական եմ եւ առաջնահերթ կարեւորութիւնը կու տամ հայ հոգեւոր գրականութեան, բայց մեր գրականութիւնը, արուեստները, ճարտարապետութիւնը եւ երաժշտութիւնը խորթ չեն ինձի եւ նոյնքան հանգիստ կը զգամ այս նիւթերով: Օրինակ՝ Գարեգին Նժդեհի ծննդեան 140ամեակին առիթով մեծ գործակներն նուիրուած երեք հատոր հրատարակեցի. այլ առիթով երաժշտական գործեր հրատարակեցի. տակաւին. պատմական - բանասիրական գործեր կը տպւն: Նեղ իմաստով մասնագիտացած հրատարակչական իմաստով աշխատանք մը չէ որ կ'ընեմ, բայց տեսնելով, որ այս գործը քիչ մը շատ ծաւալ կը ստանայ, Հայաստանի մէջ կազմեցի «Մուշկի» հրատարակչութիւնը, եւ հիմա մամուլի շնչքին մէջ՝ 12րդ յարկ, յատուկ բաժին մը ունինք, ուր կայ գիրքի աշխատանքով զբաղող անձնակազմ մը. այս տարուան Յունուարին մինչեւ այսօր արդէն 27 հազար գիրք լոյս ընծայած ենք, այսինքն՝ շաբաթ մէկ հմտոր: Հիմա որ կը գտնուիմ Լիբանան հրատարակչատան մէջ աշխատանք կը կատարուի քանի մը նոր գիրքերու վրայ:

Հետո բերի Մտեփան Կերտոզի «Գիրք տարագրոց» հատորը, որ 1918 - 1955 թուականներուն խորհրդային իշխանութեան տարիներուն նահատակուած հայ հոգեւորականներուն կենսագրութիւնները կը բովանդակէ, ինչպէս նաեւ անոնց դատապարտութիւնը եւ դատաւճիռներուն գործադրութիւնը: Տխուր գիրք մըն է, բայց կարեւոր է այն իմաստով, որ գիտնան, թէ այն ինչ որ 1915ին թուրքը մեզի ըրաւ, նաեւ որոշ ազգով խորհրդայինները ըրին իրենց տիրապետութեան շրջանին եւ հարիւրաւոր հայ հոգեւորականներ առաջնորդեցին դէպի գնդակահարութիւն: Եւ օր մը երբ պիտի սրբանշար մեր 1915ի նահատակները, չմոռնանք նաեւ ինչպէս Մուրտաթէկեանները, որոնք զոհ գացին համայնավարութեան: Այս շաբթուան ընթացքին լոյս կը տեսնէ նաեւ ուրիշ գիրք մը, որ կը խօսի յունական «Փաթիւն» լեռան մասին, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչի գանկը եւ մասունքները կան: Հայաստանի Գրողներու Միութեան օգնեցի, որ այս տարուան «Մուշկի» հրատարակչութիւնէն լոյս տեսնեն եօթը երիտասարդ գրողներու առաջին գործերը: Յայտնեմ, որ հանգուցեալ Վարդգէս Տէր կարապետեանի քեռայրը եւ քույրը իրենք հոգացին այս շաբթի հրատարակութեան ծախսերը:

2.- Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով տեղի ունեցան բազմաթիւ ձեռնարկներ, որոնց մէջ յատկանշական իմաստ ունին մանաւանդ հաւաքական մկրտութիւնները ու եկեղեցաշինութեան աշխատանքները: Այս աշխատանքներուն մէջ զուր ունեցաք մեր որոշակի դերակատարութիւնը: Ինչպէս կը գնահատեք տեղի ունեցած աշխատանքը:

Պ.- Այս էջը արդէն իսկ փակուած է: Երբ 2001ը եկաւ, քրիստոնէութեան պետական կրօն ընդունման 1700ամեակը նշեցինք եւ անցանք, բայց միշտ կարելի է ետ դառնալ, յետադարձ հայեացք մը նետել, եւ տեսնել, թէ ինչ կ'երագէինք իրագործել, ինչքան բան կրցանք ընել եւ ինչքան բան ափսոս որ չկրցանք իրագործել: Այս իմաստով ալ շատ երջանիկ չեմ մեր արդիւնքներով, որովհետեւ, օրինակ՝ եկեղեցաշինութեան պարագային, մենք մեր ցանկին վրայ նշած էինք անուններ 50 եկեղեցիներու, որոնք վերանորոգման կարիքը ունին, սակայն այդ 50 անուններէն հազիւ 25ին վերանորոգութիւնը կրցանք յաջողցնել: Կը մտթեմ, որ յառաջիկայ տարիներուն այս թափը չկորուի եւ չմոռցուի նաեւ այս ծրագիրը, մեր եկեղեցիներն ու վանքերը շարունակեն վերանորոգուիլ:

Ուրախ եմ, որ քանի մը եկեղեցիներու եւ յատկապէս Մուշկիի Ս. Գէորգ վանքի վերանորոգման աշխատանքներուն ունեցանք աշխուժ մասնակցութիւն: Մուշկիի Ս. Գէորգ վանքին վրայ ծախսուեցաւ շուրջ 200 հազար տոյար, եւ հիմա կրնամ ըսել, որ այդ վանքը Հայաստանի ամէնէն գողտրիկ վանքերէն մէկն է: Մենք չբաւարարուեցանք միայն եկեղեցիով: Անոր դիմաց կար գիւղի մշակոյթի պալատը, որ ահաւոր վիճակի մէջ էր: Մենք չէնք գնեցինք, լրիւ վերանորոգեցինք եւ 8 Յուլիոսի բացումով պիտի կատարենք: Մշակոյթի պալատին մէջ գոյութիւն ունին գրագրան, աղուքը եւ հանդիսութեանց սրահ. մեր հին հասակացողութեամբ ժողովրդային տուն մըն է ուրեմն այս մէկը: Այս ալ ձեռքով մը վանքին առաքելութեան

Հաւաքական մկրտութիւններն ալ շատ մեծ արձագանգ գտան: Առաջին հաւաքական մկրտութիւնը, որը պէյրութեան տղոց ստեղծած Ջանգեալի գիւղին մէջ էր: Այստեղ պիտի մկրտէինք 700 հոգի, սակայն անոնց թիւը բարձրացաւ 1200ի: Անկէ ետք ալք մը եկաւ եւ քանի մը տեղեր հարիւրներով, հազարներով մարդիկ մկրտեցինք: Ամէնէն մեծ հաւաքական մկրտութիւնը սակայն կատարեցինք Եղէզնիաձորի մէջ՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով: Այդտեղ շուրջ 1500 հոգի մկրտուեցան: Եղէզնիաձորին ետք կանգ առինք Գորիս եւ Տաթեւ: Եղէզնիաձորի, Գորիսի եւ Տաթեւի մէջ իրերայնորդ 3 օրերու ընթացքին մկրտեցինք 2300 հոգի: Ամէնէն հաճելի սակայն այն էր, որ այս հաւաքական մկրտութիւններուն ընթացքին շուրջ 800 կաթալու ունեցանք Հայաստանի բանակի զինուորներէն: Այդ պատկերը հրաշալի էր ինձի համար: Այդ 800 զինուորները, որոնք եկած եւ քաւոր եղած էին, իրապէս որ 1700ամեակի ամէնէն գեղեցիկ պատկերներէն մէկը կը ներկայացնեն աչքերուս առջեւ:

2.- Դուք Երեւանի մէջ ստեղծած էք «Մեծն Ներսէս» բարեսիրական հիմնադրամը, եւ անոր միջոցով աշխատանք կը տանք ծնողներու երեխաներու օգնութեան ուղղութեամբ: Հիմնադրամ արդէն իսկ կ'օժանդակէ զոհուած ազատամարտիկներու 750 անչափափաս երեխաներու: Սրբազան, եթէ կարելի է անդրադարձեք հիմնադրամի հետագայ աշխատանքներուն:

Պ.- «Մեծն Ներսէս» Բարեգործական Միութիւնը Հայաստանի մէջ հիմնեցինք ճիշդ տասը տարիներ առաջ: Երբ ահաւոր միեւր ճիւղ, Հայաստան գացինք: Տաժանագին պայմաններ էին, բայց այդ տարին 18 հազար ծրար պատրաստեցինք: Հիմա եթէ նայիս այդ ծրարներուն պարունակութեան, կրնան խնդալ, բայց այդ օրերուն համար շատ մեծ աշխատանք էր եղածը: Այդտեղէն սկսաւ մեր աշխատանքը:

Մեր պատրաստած ծրարներէն զրկեցինք նաեւ Լեռնային Ղարաբաղի թալիշ գիւղի 54 տուններուն՝ «Ամբրիկայէն՝ Արցախ» լուծուցով:

Քանի մը փորձեր կատարեցինք ծառատունկի. 232 հազար ծառ տնկեցինք:

Այս բարեգործական աշխատանքին առնթներ քանի մը գործեր նախաձեռնած ենք եւ թափով կը շարունակենք անոնց իրագործումը: Անոնցմէ մէկը որք երեսնաներու պսակը եւ նոր կենքի մը սկիւր է: Հայաստանի մէջ սերունդ մը կայ, որ գլխաւորաբար որբեր է բաղկացած է: Աստիք 18 տարեկանին շրջանաւարտ կ'ըլլան իրենց որբանոցներէն եւ առանց գործի կը մնան անօգնական վիճակի մէջ: Խորհրդային ժամանակաշրջանին տարբեր էր իրավիճակը. այդ ժամանակ պետութիւնը այդ որբերուն ապաստան կու տար, գործարաններուն մէջ գործ կը հայթայթէր կամ թոշակ կը յատկացնէր: Հիմա այս դիւրութիւնները կան, եւ այդ որբեր բացարձակապէս անտէր վիճակի մէջ են, կ'ապրին կամուրջներուն տակ կամ փողոցը:

Անոնք Ձանգեան գաղին, բայց չկրցան ապրիլ այդտեղ եւ Ձանգեանէն ժառանգ մնացին ինձի: Այս որբերուն համար ինչ ծրագիրներ պատրաստեցինք: Դիմեցինք Ամբրիկայէն բարեկամներու: Անոնցմէ իւրաքանչիւրը կը տրամադրէ 3000 տոյարի գումար մը: Այս 3000 տոյարով որբ մը տուն կ'ունենայ:

Ինչ կ'ընենք: Էլմիածինի շրջանի Մրգաշատ, Այգաշատ, Ամբրիկայի եւ այլ գիւղերու մէջ եզրտներէն եւ այլ բնակիչներէն տուն կը գնենք 2000 տոյարի: Այդ տունը ունի 600էն 1000-1200 մեթր հող: Քանի մը հարիւր տոյար կու տանք եւ տունը կը նորոգենք: Հայ պատակով համաձայնեցանք նաեւ «Էյլ» Պի. Այ. Ընկերութեան հետ: Այս տղոց կու տանք գոնէ մէկ հատ կող, քանի հատ ոչխար եւ այլն: Երբեմն ալ կը պատահի, որ նոյնիսկ կը պսակեմ գիրքեր: Արդէն մօտաւորապէս տասը հոգի այս օժանդակութեան արդիւնքները կը վայելեն: Հիմա «Էյլ» Պի. Այ. Ընկերութիւնը մեզի պիտի տրամադրէ 12 կող, որպէսզի յառաջիկայ հինգ զոյգերուն ալ տանք:

Լաւ գործ է ասիկա: Ես ուրախ եմ, որ Քանաւաթն կամ Ամբրիկայէն մէկը պատահաբար օժանդակութիւն մը կ'ընծայէ լրիւ անձանօթ զոյգի մը բարիքը ընելու համար: Վերջացնեմ այս բաժինը ըսելու համար, որ վերջերս Ամբրիկայի մէջ վաճառ թուրքի անուանով մէկը մասնացած էր եւ իր կողակէն բաժին մըն ալ հանած էր Գիւմրիի իր մանկութեան որբանոցին: Ինք վանեցի է: 1915ի Մեծ Եղեռնին կը որբանայ եւ կ'ապաստանի այդ որբանոցին մէջ: Գացինք, տէր եղանք այդ որբանոցին: Այսօր, այդ որբանոցը, որ ժամանակի ռուսական բանակի զինուորական կեդրոններէն մէկը եղած էր, հրաշալի չէնք մըն է:

Այդ շնչ

Միջապալին Քաղաքական Կեանք ԱՐԴԵՑՔ ՊՈՒՇ ԱՇԽԱՐ ՀԸ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԻ ԴԵՊՈՒ ԴԺԲԱԽՏՈՒԹԻ՝ ԻՆ

Պուշի վարչակազմին մտածելակերպը հասկանալու համար չկայ աւելի լաւ աղբիւր, քան նախագահ ծորձ Պուշի կարեւոր այն ելոյթը, որ 1 Յունիսին ան ունեցաւ Ամերիկայի ամէնէն համարաւաւոր զինուորական ակադեմիային՝ «Ուէսթ Փոյնթ»-ի մէջ, 958 սպաներու նոր հունձքի մը աւարտական հանդիսութեան ընթացքին:

Հոծ բազմութիւն մը հաւաքուած էր ակադեմիայի մարզադաշտին մէջ՝ լսելու համար Պուշը, որ պիտի բացատրէր իր վարչակազմին վարած արտաքին եւ պաշտպանութեան քաղաքականութիւնն եւրոպայի գոտիէն ստեղծուող փոփոխութիւնը:

Նախ եւ առաջ նախագահը կը խօսէր իրրեւ ողջունելի ղեկավարը աշխարհի ամէնէն հզօր պետութեան երկիր մը, որ գիտակից է իր զինուորական անվիճելի հզօրութեան, իր համաշխարհային հասոցութեան եւ իր համաշխարհային պատասխանատուութիւններուն: 3 Յունիսին «Թայմ» ամսագրի մէջ հրատարակուած վիճակագրութիւն մը ցոյց կու տար, որ ամերիկացիներուն 72 տոկոսը համամիտ է Պուշի՝ երկիրը կառավարելու ձեւին: Կեցցէ՛ նախագահը:

Սակայն Միացեալ Նահանգները նաեւ երկիր մըն է, որ տակաւին կը գտնուի 11 Սեպտեմբերի ցնցումին առթած ազդեցութեան տակ: Դեռ անցեալ շաբաթ էր, որ Համաշխարհային Առեւտուրի կեդրոնին վայրը վերջնականապէս մաքրուեցաւ: Ամերիկացիներուն ըմբռնումով, շէնքերը վար առնող թշնամիները տակաւին ազատ կը շրջին, անտեսանելի են, գաղտնի, ծայրայեղական, «չարամիտ» են, կ'ստեն «բարի» Միացեալ Նահանգները եւ վստահաբար կը պատրաստուին կրկին հարուածել:

Ինք ամիս առաջ պատահած այս յարձակումը գրաւած է ամերիկեան միտքերը՝ գրեթէ բոլորովին դուրս ձգելով ուրիշ որեւէ նիւթ: Իր անակնկալ ըլլալու հանգամանքով եւ կործանիչ ուժով աննախնդր ցոյց ըլլալով՝ ցնցած է ամերիկեան ազգային առաջնահերթութիւններու վերադասուումը: Ոչ ոք ասկէ առաջ փորձած էր հարուածել Միացեալ Նահանգներուն սիրտը: Այդ հարուածին ազդեցութիւնները արեւելի մաս տարածուեցան ամերիկեան տնտեսութեան մէջ՝ պատճառ դառնալով միլիարտաւոր տոլարի վնասի: Անիկա նաեւ երկրաշարժ պատճառեց միջազգային քաղաքականութեան մէջ: Ըստ երեւոյթի, թիրախը միայն Նիւ Եորքն ու Փենթագոնը չէին, այլ նաեւ՝ Արեւմտեան բաց, ազատ ընկերութիւնը ինքնին: Ամէն մարդ գիտէ, որ 11 Սեպտեմբերի յարձակումը սովորական արհեստագիտութեան իրագործուած անձնասպանական գործողութիւն մըն էր, որուն ընթացքին քաղաքային օդանաւեր օդատարուեցան իրրեւ հրթիռներ: Սակայն Միացեալ Նահանգներ այսօր կը հարցնեն, թէ ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ ահաբեկչական կազմակերպութիւն մը կորիզային, քիմիական կամ կենսաբանական զենքեր ձեռք ձգէ, հաւանաբար՝ անհնազանդ պետութեան մը ճամբով: Ասիկա Պուշի վարչակազմին դիմագրաւած նոր մարտահրաւերն է, որ նոր եզրեր կու տայ «ահաբեկչութեան զէմ պատերազմին»: Ինչպէս կարելի է հակազդել այդպիսի մահացու սպառնալիքի մը:

11 Սեպտեմբերէն ի վեր, երբ Միացեալ Նահանգներ կորսնցուցին իրենց անմեղութիւնը, Փենթագոնի ծրագրողները, գաղտնի սպասարկութեան եւ ապահովութեան պաշտօնատիրները, Քոնկրէսի յանձնախումբերը, ուսումնասիրական հիմնարկներու ռազմավարական հարցերու մասնագէտները եւ աւագ ռազմավարութիւն ճշդողները կ'արձարծեն այն հարցը, թէ ի՞նչպէս կարելի է Միացեալ Նահանգները ապահով դարձնել նորէն:

Նախագահ Պուշի 1 Յունիսի ելոյթը նպատակադրած էր պատասխան մը տալ այդ հարցին: Պուշին խօսքը «նէօ-պահպանողական» մտածելակերպի աւանդական դրսեւորում մըն էր: Անկասկած անոր նպատակն էր վստահութիւն ներշնչել եւ զօրաշարժի ենթարկել ամերիկեան հանրային կարծիքը 11 Սեպտեմբերի տարեկիցէն եւ Նոյեմբերի ընտրութիւններէն առաջ:

Պուշի փոխանցած պատգամը պարզ էր, բայց նաեւ՝ մտահոգիչ. անիկա կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.

● Արգիլել, այլ խօսքով՝ ոչնչացնել թշնամի մը, ապա վրէժխնդրութեան վախով ապրել ա'լ գործադրելի չէ: Պուշ պատերազմի ընթացքին Միացեալ Նահանգներուն եւ Նորհարկային Միութեան միջեւ խաղաղութիւն պահելու հանդերձ, արգիլել ազդեցութիւն չունէր 11 Սեպտեմբերին: «Ալ Քայլիտա»-ն ետ չկեցաւ ամերիկեան վրէժխնդրութեան մտավարկութեան պատճառով:

Պուշին բառերով՝ արգիլել «ոչ մէկ իմաստ ունի ստուերային ահաբեկչական ցանցերու դէմ, որոնք ազգ կամ քաղաքայիններ չունին պաշտպանելու»:

● Սահմանափակել, այսինքն՝ իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնին նման թշնամի մը հարուածել



Արաքսի Ռամալայի կեդրոնացուող իսրայէլեան վերջին ճակատամարտի շրջանում

եւ արգիլել իրենց արտաքին յարձակումներ գործել, նորէն գործադրելի չէ այլեւս: Պուշին բառերով՝ սահմանափակել «կարելի չէ, երբ զանգուածային ոչնչացման զէնքեր ունեցող անհասարակ շրջաններ կրնան իրենց զէնքերը գաղտնորէն փոխանցել ահաբեկիչ դաշնակիցներուն»:

● Ուրեմն, եթէ արգիլել ու սահմանափակել, այն աւանդական զէնքերը, որոնցմով կարելի էր խաղաղութիւն պահել երկրներուն միջեւ, այլեւս ազդու չեն, յետոյ ի՞նչ: Պուշի պատասխանը նախադրուած միտքով իրաւունք ձեռք ձգելն է: Ան նշեց. «Մենք պէտք է պատերազմ փոխադրենք թշնամիին տարածքը, խափանենք անոր ծրագրողները եւ ամէնէն վտանգաւոր սպառնալիքները դիմագրաւենք նախքան անոնց յարձակումը: Այն աշխարհին մէջ, ուր կ'ապրինք, զէպի ապահովութիւն տանող միակ ճամբան աշխատանքի, գործելու ճամբան է: Եւ այս ազգը պիտի գործէ»: «Միացեալ Նահանգները, - նշեց ան, - պէտք է ահաբեկչութեան ընդհանր բացառաւոր վախճանը աւելի երկիրներու մէջ եւ դիմագրաւէ ահաբեկչութեան ֆինանսաւորող վարչակազմը»:

Այլ խօսքով, Պուշ միակողմանի նախադրած կ'ըլլաւ քաղաքականութիւն մը հռչակեց ընդդէմ ահաբեկչներու, երբ եւ ուր որ Միացեալ Նահանգները ընտրեն: Նախագահը իր սպառնալիքները չսահմանափակեց «չարի առանցք»-ի երեք երկիրներուն շուրջ (Իրան, Իրաք եւ Հիւսիսային Քորէա): «Ուրիշ երկիրներ, - յայտարարեց ան, - դէմ են ահաբեկչութեան, բայց կը հանդուրժեն ահաբեկչութեան առաջնորդող ստեղծութիւնը: Եւ այդ մէկը պէտք է փոխուի»:

Իր բարոյական խաչկրութիւնը աւելի հեռուն տանելով՝ ան զգաստութեան հրաւիրեց «խլամական երկիրներուն ժողովուրդները, որոնք կ'ուզեն եւ արժանի են նոյն ազատութեան եւ առիթներուն, ինչպէս՝ բոլոր միւս երկիրներու ժողովուրդները»: «Ուշիցիցի Փոսթ» գրեց, թէ Սպիտակ Տան աշխատակիցներ նշած են, որ Նախագահին քննադատութիւնը ուղղուած էր Մէլուտական Արաքիոյ. երկիր մը, որ իսրայէլեան լոպիստներու եւ աջակողմեան մտաւորականներու կողմէ կը համարուի հակամեքիկեան, իսլամ ծայրայեղական ահաբեկչութեան զլխաւոր բանալի:

Կարծես Պուշ կ'ուզէր ըսել, որ աշխարհի հզօրագոյն ուժը ըլլալով՝ Միացեալ Նահանգներ միջոցները եւ իրաւունքը ունին իրենց կամքը պարտադրելու ուրիշներու վրայ եւ աշխարհը ձեւաւորելու իրենց օրինակով:

Արդեօք այդ քաղաքականութիւնը պիտի յաջողի՞ աշխարհին խաղաղութիւն եւ ապահովութիւն բերել կամ ընդհակառակը, պիտի նպաստէ՞ համաշխարհային անօրինութեան: Իմ կարծիքով, կարգ մը արմատական սխալներ կան աշխարհի վիճակին վերաբերող ամերիկեան վերլուծումին մէջ:

11 Սեպտեմբերը Միացեալ Նահանգներուն համար ցաւալի ըլլալով հանդերձ, միակ եւ վստահութեան մէջ չգերազանցուած արարք մը չէր: Վերջին շրջանի պատմութեան մէջ եղած են քանի մը աւելի վատ ոճիւրներ, անոնցմէ ոմանք գործադրուած են նոյնիսկ Միացեալ Նահանգներու կողմէ: Գրեթէ միշտ պետական վարչապետութիւնները, կը գերազանցեն ահաբեկչական վարչապետութիւնները, ինչպէս կրնանք տեսնել պաղեստինեւիսրայէլեան տագնապին մէջ:

Մինչ քիչեր Արեւմուտքի մէջ կ'ուզեն արդարացրել կամ ներել Ուսամա Պըն Լատէնին ահաբեկչական արարքները, շատեր Արեւելքի մէջ անոր վայրագ արարքները կը դատեն իրրեւ հակադարձութիւն՝ վերջին տասնամեակներուն Արեւմուտքին եւ իր դաշնակիցներուն կողմէ արարքներուն եւ իսլամներուն դէմ գործադրուած վարչապետութեանց: Ես պիտի առաջարկեմ, որ Միացեալ Նահանգներ փորձեն հասկնալ Ուսամա Պըն Լատէնը, փոխանակ զայն իսլամ արմատականութեան մարմնացումը համարելու:

ՓԱՐՏԻՔ ՍԻԼ

«Տէլի Սթար»

Շաբ.ը՝ էջ 8

ԻՐԱՆ ՄԻԱԿՈՂ ՄԱՆԻՕՐԵՆ ԿԸ ՍԿՍԻ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ՈՒԺԱՆԻԹԻ ՀԱՆՔԵՐԸ ՊԵՂԵԼ

Իր դրացի երկիրներուն հետ կասպից ծովու հարստութիւնները բաժնեկցելու շարք մը ձախող միակ համաձայնութիւններով իրենց միջեւ կը թէ միակողմանիօրէն զարկ պիտի տայ կասպից ծովու իր բաժինին մէջ քարիւղ պեղելու աշխարհաբարձ արձանագրութիւնները: Թէեւ Թեհրան ծովային վիճելի շրջաններու մէջ շահարկումներ կատարելու հակամիտութիւնները ընդամենը չեն զարկ տալու կասպից ծովու իր բաժինին մէջ քարիւղ պեղելու աշխարհաբարձ արձանագրութիւնները: Թեհրան ծովային վիճելի շրջաններու մէջ շահարկումներ կատարելու հակամիտութիւնները ընդամենը չեն զարկ տալու կասպից ծովու իր բաժինին մէջ քարիւղ պեղելու աշխարհաբարձ արձանագրութիւնները: Թեհրան ծովային վիճելի շրջաններու մէջ շահարկումներ կատարելու հակամիտութիւնները ընդամենը չեն զարկ տալու կասպից ծովու իր բաժինին մէջ քարիւղ պեղելու աշխարհաբարձ արձանագրութիւնները:

Իրանի քարիւղի նախարար Պիճան Նամտար-Չանկանէ Մայիս 23ին «ԻՐՆԱ» լրատու գործակալութեան լրատուագրութեան միջոցով 300 միլիոն տոլարի արժողութեամբ հորատման արձեռնակներ կ'ընդունէր, Թեհրան անոնց իր դրացիներուն համաձայնութիւնը ապահովելու՝ պիտի սկսի կասպից ծովուն մէջ քարիւղի հետախուզութեան: Նախարարը յայտնեց, որ երկու տարուան վրայ երկարող այս ծրագիրը կը նպատակադրէ հետախուզելու կասպից ծովու հարաւային շրջանները: Ան մերժեց պատասխանել այն հարցումին, թէ Թեհրան արդեօք կը միտի՞ Արգայէյնի մէջ Իրանի միջեւ վիճելի Արգայէյնի մէջ պեղումներ կատարել:

Յայտարարութիւնը յանկարծակի փոփոխութիւն մը կը հանդիսանայ կասպից ծովու հարցով իրանի կեցուածքի մէջ: Իրան երկար տարեկէ ի վեր արտադրած է այն կարծիքը, թէ կասպից ծովը եզրուող 5 երկիրները իրենց միջեւ հաւասարապէս պիտի բաժնուին ծովային տարածքը՝ իւրաքանչիւրը ստանալով 20 առ հարիւրը: Իրան նաեւ կը շնչտէր, որ ծովային տարածքը բաժնուելէ առաջ պէտք է հետախուզութիւններ կատարել: Կասպեան միւս 4 պետութիւնները համամիտ են մէկ այլ ծրագրին, որուն իրրեւ արդիւնք իրանի կը մնայ տարածքին 12-16 առ հարիւրը միայն: Իրան այս հարցին նկատմամբ զիջումներ կատարելու տրամադրութիւն չունի:

Իրանի յայտարարութիւնը կը յաջողէ տարածքի բաժանման հարցին լուծման շարք մը ձախող փորձերուն: Անցեալ Ապրիլին, կասպեան 5 պետութիւններուն միջեւ կեցած ծովային տարածքի բաժանման հարցը առանց համաձայնութեան: Մայիսին Ազըրպէյճանի նախագահ Հայտարարութիւնը իրան այցելութիւնը եւս վերջ գտաւ առանց համաձայնութեան յանգելու:

20 առ հարիւրի Թեհրանի տարածքային պահանջը արդէն լարուածութիւն ստեղծած է կասպեան երկիրներուն միջեւ: Անցեալ ամբարն լարուածութիւնը իր գազաթնակէտին հասաւ, երբ իրանեան ռազմաւաւոր սպանաց կրակ բանալ ազերիական հետախուզական երկու նաւերու վրայ, եթէ անոնք չլքեն «Իրանեան տարածքը»:

Մինչ իրանցիները ճկունութիւն բնաւ չեն ցուցաբերել, կասպեան միւս երկիրները երկողջ-միակ համաձայնութիւններով իրենց միջեւ կը բաժնեն կասպից ծովը: Վերջերս Ռուսիոյ եւ Ղազախստանի միջեւ կնքուած համաձայնութիւնը, զոր Թեհրան «օրինակաւորէն անհիմն» եւ «անընդունելի» նկատեց, Ռուսիոյ եւ Ղազախստանի առիթ պիտի կայն վերոնշեալ յայտարարութիւնը վստահաբար բաւարար է լարուածութիւն ստեղծելու:

Իրանի քարիւղի նախարար Պիճան Նամտար-Չանկանէ Մայիս 23ին «ԻՐՆԱ» լրատու գործակալութեան լրատուագրութեան միջոցով 300 միլիոն տոլարի արժողութեամբ հորատման արձեռնակներ կ'ընդունէր, Թեհրան անոնց իր դրացիներուն համաձայնութիւնը ապահովելու՝ պիտի սկսի կասպից ծովուն մէջ քարիւղի հետախուզութեան: Նախարարը յայտնեց, որ երկու տարուան վրայ երկարող այս ծրագիրը կը նպատակադրէ հետախուզելու կասպից ծովու հարաւային շրջանները: Ան մերժեց պատասխանել այն հարցումին, թէ Թեհրան արդեօք կը միտի՞ Արգայէյնի մէջ Իրանի միջեւ վիճելի Արգայէյնի մէջ պեղումներ կատարել:

Յայտարարութիւնը յանկարծակի փոփոխութիւն մը կը հանդիսանայ կասպից ծովու հարցով իրանի կեցուածքի մէջ: Իրան երկար տարեկէ ի վեր արտադրած է այն կարծիքը, թէ կասպից ծովը եզրուող 5 երկիրները իրենց միջեւ հաւասարապէս պիտի բաժնուին ծովային տարածքը՝ իւրաքանչիւրը ստանալով 20 առ հարիւրը: Իրան նաեւ կը շնչտէր, որ ծովային տարածքը բաժնուելէ առաջ պէտք է հետախուզութիւններ կատարել: Կասպեան միւս 4 պետութիւնները համամիտ են մէկ այլ ծրագրին, որուն իրրեւ արդիւնք իրանի կը մնայ տարածքին 12-16 առ հարիւրը միայն: Իրան այս հարցին նկատմամբ զիջումներ կատարելու տրամադրութիւն չունի:

Իրանի քարիւղի նախարար Պիճան Նամտար-Չանկանէ Մայիս 23ին «ԻՐՆԱ» լրատու գործակալութեան լրատուագրութեան միջոցով 300 միլիոն տոլարի արժողութեամբ հորատման արձեռնակներ կ'ընդունէր, Թեհրան անոնց իր դրացիներուն համաձայնութիւնը ապահովելու՝ պիտի սկսի կասպից ծովուն մէջ քարիւղի հետախուզութեան: Նախարարը յայտնեց, որ երկու տարուան վրայ երկարող այս ծրագիրը կը նպատակադրէ հետախուզելու կասպից ծովու հարաւային շրջանները: Ան մերժեց պատասխանել այն հարցումին, թէ Թեհրան արդեօք կը միտի՞ Արգայէյնի մէջ Իրանի միջեւ վիճելի Արգայէյնի մէջ պեղումներ կատարել:

Շրջանին բաժանման շուրջ տարակրօնութիւնները շահարկումները ստեղծուած է նաեւ կասպից ծովու ռուսական շրջանին մէջ: Մահաբէյն, որ Միացեալ Նահանգներ կ'օգնեն Ազըրպէյճանին, որպէսզի ան կասպից ծովուն վրայ իր ռազմական ներկայութիւնը ամրապնդէ: Մարտի վերջերս ամերիկեան եւ ազերիական բարձրաստիճան պատասխանատուներ խորհրդակցութիւններ ունեցան ծովային ռազմավարութեան հարցերու շուրջ: Միացեալ Նահանգներու օդուժը հետաքրքրութիւն ցուցաբերած է Արգայէյնի մէջ խարխուղ մը հաստատելու: Աւելին՝ Քոնկրէսը Ազըրպէյճանին զէնք վաճառելու դէմ արգելք վերցուցած է եւ զինուորական իրանի բախումի մը պարագային:

Իրանի յայտարարութիւնը զգուշացումի նշան մը կը թուի ըլլալ: Թեհրան կը թուի վճռական ըլլալ եւ յարձակողական կեցուածք որդրելու փոխարինութեամբ: Հրթիռաբաժանման խարխուղ մը եւս պայթեան շրջանին տեղափոխուած է կասպից ծովը: Թէեւ արտաքինապէս ռազմական այս իրադրութիւնը կը ներկայացուի իրրեւ ահաբեկչութեան եւ մաքսանենգութեան դէմ քայլ, սակայն, մեկ նաքաններու համաձայն, ռազմական այս շարժումները խորքին մէջ շրջանին մէջ Իրանի վրայ Ռուսիոյ գերակայութիւնը ապահովելու համար են: Թէեւ ռուսական եւ իրանեան շրջանային շահերու ուղիակիօրէն չեն խաչաձեւուի, սակայն ռուսական քարիւղի ընկերութիւնները շահեր ունին ազրպէյճանական շրջաններու մէջ:

ԱՐԹԻ ՄԱՔՔՈՆԸԼ

Համացանցի «Իւրէժիստ» կայք

ONE SECOND IS ENOUGH...
Արագը Կը Պահանջ Երկարութեան Սը Մեզ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՐ ԵՐԿԱՅ ԵՄՔ ԱՄԸՆ ԵՐԿԱՅՐԵՄԵՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Սփտի Ետք, Բ. Յարկ, 760. Ն. Յարկ. (01) 262321-242556-242557
Hmn. AFED, 20me etage, Tel. and Fax: (01) 262321-242556-242557

www.hamazkayin.com

ՀԱՅ ՄԵՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

ՀԱՅ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ԸՆԴՄԵՋԷՆ

Պատմութեան հնագոյն ժամանակներէն մարդկային հաւաքականութիւններու կազմաւորման առաջին կառոյցները եղած են տոհմերը կամ ցեղախումբերը: Արեւակցական ու ազգականական կապերով, բարբերով, աւանդութիւններով ու սովորութիւններով, իրերօգնութեան պարտաւորութիւններով եւ երբեմն ալ լեզուական կամ բարբառային առանձնաշատկութիւններով իրարու կապուած ընտանիքներ կազմած են գերդաստաններ, տոհմեր ու ցեղախումբեր, որոնք տնտեսական, զինուորական եւ քաղաքական կազմակերպական կառոյցներ եղած են: Անոնցմէ շատեր ունեցած են իրենց տոհմաւնշանը (յաճախ անասուն մը եղած է), որ պաշտամունքի առարկայ եղած է:

Ծայրագոյն Արեւելքէն, Հնդկաստան, Կեդրոնական Ասիա, Մերձաւոր Արեւելք, Ափրիկէ, Եւրոպա կամ այլուր, հաւաքականութիւններ կազմաւորուած են իրրեւ ցեղախումբեր: Հետագային, կազմաւորուած են ազգեր, կերտուած են մշակոյթներ, կազմաւորուած են պետութիւններ: Այս բոլորէն ետք տոհմական կառոյցներ եւ աւանդութիւններ շատ մը ժողովուրդներու մօտ մնացած են անեղծ, աստիճանաբար տարածուած է ազգանունի գործածութիւնը, կազմուած են տոհմաւնշաններ, տոհմական նշանաբաններ, տոհմաձուներ, եւ հասած մինչեւ ներկայ ժամանակները: Տարբեր ժողովուրդներու մօտ ազգանունի գործածութեան վերաբերեալ տանք քանի մը օրինակներ:

Սկսելով Ծայրագոյն Արեւելքէն՝ ձափոնի մէջ անցեալին ազգանուն գործածած են գլխաւորաբար միայն ազնուական եւ սամուրայ (պատեարգամիկ) տոհմերը (Քոնոէ, Շիմազու, Հոսոթրաուտ եւ այլն), իսկ ժԹ. դարու կեսէն ետք ազգանունի գործածութիւնը պարտադիր դարձած է. ամէնէն տարածուած ազգանուններն են՝ Թաւաքա (թա կը նշանակէ բրինձի արտ, նաքա՝ մէջ), Սուգուրի, Եսամաթո, Ուաթապապէ եւ Սայթո: Քորեայի մէջ ազգանունները կազմուած են հին ցեղային բաժանումներու հիմամբ, եւ քորեացիներուն մէկ հիգերորդը Քիմ ազգանունը կը կրէ: Վիեթնամի մէջ ամենուրեք տարածուած են Նիկուլէն, Նիօ, Թրինգ ազգանունները: Նշենք, որ ծայրագոյն արեւելեան ժողովուրդներուն մօտ ազգանունը անհատի անունի սկիզբը կը դրուի, թեւ օրինակ ձափոնի մէջ ներկայիս ընդհանրացած է նաեւ անան վերջաւորութեան դնելու սովորութիւնը:

Իսլամ ժողովուրդներու մօտ ազգանունի գործածութեան սովորութիւն ընդհանրապէս չէ եղած. Իրանի եւ Թուրքիոյ մէջ, օրինակ, 1930ական տարիներուն պարտադիր դարձաւ ազգանունի գործածութիւնը:

Եւրոպայի մէջ միջնադարուն տարածուած է ազգանունի գործածութիւնը: Ֆրանսայի մէջ, օրինակ, մօտաւորապէս 250 հազար ազգանուն կայ, որոնցմէ ամէնէն տարածուածներն են՝ Մարթէն (168 հազար), Պեռնար (98 հազար), Մորո եւ Տիւրան (78 հազար), Փրէթի, Թոմաս եւ Տիւպուա (77 հազար) եւ այլն: Սպանիոյ մէջ ազգանուններ կան, որոնք ցեղային ծագումնական տուեալներ կը բնորոշեն. օրինակ՝ Սուարես (սուկ հարի, որ արիւն, ցեղ կը նշանակէ, վիսիգոթներու ներխուժումներուն ժամանակ Սպանիա մտած են): Իսկ պարսերը, որոնք դարեր շարունակ ընտանեկան ազգակցութիւններու քանակներու մէջ ապրած են, այդ ազգակցութիւններուն անունով նանչցուած են. օրինակ՝ Արիսթեկի (կաղնուտ), Միստոսա (ցուրտ լեռ) եւ այլն:

ԳԵՐԴԱՍՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆԸ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵՋ

Այլ ժողովուրդներու նման, Հայեր եւ նախաքրիստոնէական դարերէն տոհմերու բաժանուած էին: Միեւնոյն նախաօրմէն սերած, իրարու արհեստակից եւ ազգական ընտանիքներէ բաղկացած տոհմը ունեցած է իր տանուէնը կամ նահապետը, նուիրական օճախը (ուր կարգ մը վայրերու, ինչպէս՝ Տերսիմի մէջ, կրակը անմար կը պահուէր. այդ անունը թիւնը գոյատեւած է մինչեւ Մեծ Եղեռն), բնակավայրը (կամ բնակավայրերը, յաճախ նաեւ՝ պաշտպանական ամրութիւնները) կալուածները, խաչիքները, իրեն յատուկ առանձնաշատկութիւններ, սրբութիւններ, աւանդութիւններ, բարբեր ու սովորութիւններ:

Հայերը աշխարհի առաջին ժողովուրդներէն եղած են, որոնք տակաւին նախաքրիստոնէական դարերէն ազգանուն գործածած են, մինչդեռ օրինակ Եւրոպայի մէջ միջնադարուն սկսած է ազգանունի գործածութիւնը: Սակայն ընդհանուր առմամբ ազնուական տոհմերն են, որ իրենց ազգանունով ճանչցուած են, մինչդեռ շինական ժողովուրդը աւելի իր բնակավայրին անունով ճանչցուած է, իբրեւ այս կամ այն գիւղի կամ գաւառի բնակիչ:

Ամէնէն աւելի մեծ, հզօր, ազնուական եւ գինուորական կառոյց ունեցող տոհմերը՝ Արծրունի, Ռշտունի, Բագրատունի, Մամիկոնեան, Սիւնի եւ այլն, Հայ ժողովուրդին պատմութիւնը կերտող ուժերը եղած են:

Պատմութեան դարաւոր տակնուվրայութիւններու պատճառով, եւ յատկապէս՝ սել-

ճուք-թրքական արշաւանքներէն ետք, ԺԱ. - ԺԲ. դարերուն Հայ աւանդական եւ մանաւանդ ազնուական տոհմերէն շատեր ցիր ու ցան եղած կամ սպառած են: Բայց այնուհետեւ երեւան ելած են Հին ազնուականներէ սերած կամ նոր կազմաւորուած տոհմեր, որոնք ժամանակի ընթացքին բազմացած են: Յիշենք Ջաքարեանները, Արղուսեանները, Օրբէլեանները, Պոռոչեանները, Լոռու Մելիքեանները, Արցախի մելիքական տունները, Սասունի, Հաճընի, Ջէյթունի իշխանական գերդաստանները, որոնցմէ շատեր Հայ ժողովուրդին առաջնորդող ուժերը մնացին մինչեւ պատմութեան նորագոյն ժամանակները:

Եղած են նաեւ եկեղեցական ծառայութեան նուիրուած գերդաստաններ. ինչպէս որ Հին ժամանակ կաթողիկոսութիւնը ժառանգական եղած է, շատ մը գիւղերու մէջ ալ քահանայութիւնը սերունդէ սերունդ ժառանգական եղած է. այդ գերդաստանները վարկ ու յարգանք վայելած են իրենց շրջապատին մէջ: Քահանայական սերունդը նկատուող գերդաստանները բազմաթիւ են. անոնք ընդհանրապէս Տէր մակդիրը կը կրեն իրենց ազգանունի սկիզբը:

Նախադարեան արշաւանքներուն ժամանակ լատին կարգ մը ընտանիքներ կամ անհատ խաչակիրներ մնացին Արեւելք եւ հետագային խառնուեցան բնիկ ժողովուրդներուն, նաեւ՝ Կիլիկիոյ Հայերուն մէջ: Օրինակ, հաճընցի Փեթիլեան գերդաստանին համար կ'ըսուի, որ Ֆրանսացի Փեթիլեաններն սերած են. Փեթիլեան գերդաստանը Ֆրանսիայէն փոխառած էր. անոնք մէջ կը կրեն իրենց ազգանունը: Ֆրանսացի մէջ (անոնցմէ էր մարալխա Տիրիփ Փեթիլեան):

Թրքական եւ պարսկական դարաւոր տիրապետութիւններու պատճառով Հայերու մօտ ազգանուն գործածելու աւանդութիւնը մեծ մասամբ վերջ գտած է: Որովհետեւ թուրքերը, պարսիկները եւ ընդհանուր առմամբ իսլամները ազգանուն գործածելու սովորութիւն չեն ունեցած, Հայեր եւս որդեգրած են նոյն գրութիւնը, մանաւանդ՝ օսմանեան դարաւոր տիրապետութեան ժամանակաշրջանին: Ազգա-

նունի փոխարէն, տիրող գրութեան համաձայն, իւրաքանչիւր անձի անուն կը կցուէր հօր անունը: Կամ՝ «եան» մը աւելցնելով, հօր անունը ազգանունի կը վերածուէր, եւ այսպէսով, մէկ-երկու սերունդ ետք ազգանունը կրկին կը փոխուէր. Հին գերդաստանական անունները մոռացութեան մատնուելով, նոյնիսկ անմիջական գարմիկներ եւ եղբայրներ յաճախ տարբեր ազգանուններ կը կրէին:

Սակայն, հակառակ այս իրողութեան, դարերու անցեալ ունեցող աւանդական շատ մը գերդաստաններ պահած են իրենց բուն ազգանունը. օրինակ՝ Տերսիմի Միրաքեանները, Հայնոնց տունը (Հայլանեան), Հաճընի Թուրսարգիսեանները, Թումարգայի Հազարահանները, Մատրուզեանները, Թալաթի Կիւլպիկեանները, Այնթապի Նազարեանները եւ այլն, որոնց սերունդները ներկայիս տարածուած են տարբեր երկիրներու մէջ: Արեւելեան Հայաստանի մէջ դարերու պատմութիւն ունեցող գերդաստաններէն յիշենք Լոռիի Արղուսեանները, Լոռու Մելիքեանները, Նիսարեանները, Շահվերտեանները, Սիւնիքի Մելիք Փարսադանեանները, տարբեր վայրերու մէջ կեդրոնացած կամսարականները եւ այլն: Գաղթաշխարհի մէջ ազգանունի գործածութիւնը գրեթէ ամէնուրեք պահուած էր. յիշենք Ռումանիոյ կամ Հունգարիոյ երբեմնի Հայահոծ բնակավայրերուն մէջ կեդրոնացած, դարեր շարունակ եւ մինչեւ հիմա իրենց գրութիւնը պահած Միսիրեան, Գարրիբեան, Փրունգուլեան, Գարաչոնի, Լուքաչ գերդաստանները եւ այլն:

Զարթօնքի շրջանէն եւ յատկապէս Ազգային սահմանադրութենէն ետք, ԺԹ. դարու կէսերուն սկսաւ վերականգնել ազգանուն գործածելու աւանդութիւնը. Պոլսոյ Ազգային իշ-



Տարոնցի ընտանիք մը

խանութիւնները որոշեցին, որ դպրոց յաճախող իւրաքանչիւր աշակերտ, կամ ամուսնացող իւրաքանչիւր զոյգ ազգանունով պէտք է արձանագրուի: Շատեր իրենց հօր կամ մեծ հօր անունը ազգանունի վերածեցին. կարգ մը ընտանիքներ, որոնք որոշ մակդիրով մը ճանչցուած էին, զայն ազգանունի վերածեցին, ոմանք ալ իրենց արհեստին անունով ճանչցուեցան: Սակայն, մակդիրով կամ արհեստի հիմամբ կազմաւորուած ազգանունները ընդհանրապէս թրքերէն էին: Կարգ մը ընտանիքներ ալ իրենց բնակավայրին կամ օրանին անունը ազգանունի վերածեցին. օրինակ՝ Վանեան (վանեցի), Մուշեան (մշեցի), Գայսէրեան (կեսարացի): Բանիմաց կարգ մը ընտանիքներ ալ Հին ազնուական տուններու ազգանուններ որդեգրեցին:

Ներկայիս, աշխարհի տարբեր ժողովուրդներու մօտ զարթօնք մը կայ արմատներուն վերադառնալու. իրլանտացի, սկոտլանդացի, սպանացի, պարսեւ եւ այլ տոհմեր (որոնցմէ շատեր դարեր առաջ ցրուած են աշխարհի չորս ծագերուն) սկսած են համախմբուել, տոհմական ընկերակցութիւններ կազմել, վերականգնել իրենց տոհմական կառոյցները, տոհմապետութիւնը, աւանդութիւնները, բարբերը, պատմութիւնը, զինանշաններն ու տոհմանանները, ջանի մը դարերու վրայ երկարող տոհմաձուներ կազմել եւ այլն:

Օրինակ, Իրլանտայի մարաքաղաք Տալլի-նի մէջ հաստատուած է ազգաբանական կեդրոն մը, որուն պարտաւանդութիւնն էր իրլանտական տոհմերուն վերանանգնումը: Արդարեւ, իրլանտացի ժողովուրդին կազմակերպական ու գինուորական ուժը նկատուող տոհմերը դարեր առաջ անգլիական բանակներուն կողմէ նուաճուեցան, ցիր ու ցան եղան, բունազգալի մղուեցան դէպի գաղթավայրեր (շատեր գերիներու վիճակուէ մատնուած), իսկ անոնց իշխող ընտանիքները մեծ մասամբ սպանացան կամ փախան կաթողիկ երկիրներ՝ Սպանիա, Փորթուգալ, Ֆրանսա, Աւստրիա եւ այլն: Տալլի-նի Ազգաբանական կեդրոնը 1944ին հաստատեց, որ Օ'Քալահաններու տոհմապետներու տան որդի ի հօրմէ յաջորդութեամբ ուղիղ գիծով ժառանգորդը Սպանիոյ թորթոսա քաղաքի բնակիչ Տոն Սուան Օ'Քալահանն է, եւ անոր տոհմապետի ու ազնուականի աստիճան շնորհեց: Փորթուգալ եւ Սպանիա հաստատուած Օ'Նէյլ տոհմապետներու շառաւիղները նոյն ձեւով վերականգնեցին իրենց իրաւունքները. այսպէս նաեւ այլ տոհմերու պարագային:

* *

Մեր մօտ ազգաբանական ուսումնասիրութիւնը տակաւին առանձին ուշադրութեան չէ արժանացած. այսօր քիչ ընտանիքներ կան, որոնք ջանի մը սերունդէ աւելի Հին պատմութիւն ունին կամ ծանօթ են իրենց ազգաբանութեան, եւ արդէն Հայոց ներկայ ազգանունները կամ գերդաստանները մեծ մասամբ ԺԹ. դարուն կազմաւորուած են: Քիչ են այն գերդաստանները, որոնք դարերու վրայ երկարող տոհմաձուներ ունին:

Պարբերաբար կամ յաջորդական առանձին յօդուածներով պիտի աշխատինք, կարելիութեան սահմաններուն մէջ, Հայ գերդաստաններու մասին մեր հաւաքած կամ տակաւին ձեռք ձգելիք արխիւներն ու նիւթերը հրատարակել, հաւատարմով, որ այդ բոլորը իրենց ներդրումը կ'ունենան Հայ ազգագրութեան անդամանէն ներս:

ԱԶՆՈՒՍԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Հայ իրականութեան մէջ բազմաթիւ են հին ազնուական տուններու ազգանունը կրող գերդաստաններ, որոնք սակայն ոչ մէկ կապ ունին անոնց հետ. հին ազնուական տոհմերը ԺԱ. դարէն սկսեալ պատմութեան քառերաբեմէն անցնուցած են, իսկ ներկայիս անոնց ազգանունը կրող ընտանիքներուն արմատները ընդհանրապէս ժԹ. դարէն հետո չ'երթար: Սակայն կան ընտանիքներ, որոնք ունին պատմական այնպիսի աւանդութիւններ, տոհմաձուներ կամ փաստաթուղթեր, որոնք հիմ կու տան անոնց ազնուականութեան հաստատումին: Նշենք բնորոշ քանի մը օրինակներ:

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՆԵՐԸ համանուն նախարական տան՝ Շիրակի եւ Արշարունիքի տեր Կամսարականներուն շառաւիղները կը նկատուին: Հայաստանի մէջ հայրենագրուկ ըլլալէ ետք անոնց մէկ ճիւղը անցաւ Շաղափոմք եւ հետագային հոնկէ հետանալով հաստատուեցաւ Կարին, ուր մնաց մինչեւ 1768 եւ ապա Պոլիս փոխադրուեցաւ: Կամսարականներէ Տղայ Վասիլ Կիլիկիոյ կողմէրը հաստատուած էր եւ Տարսուսեան լեռներուն վրայ Գող Վասիլի զինակիցն էր, բայց 1116ին կորսնցուց իր տիրոջները եւ Պոլիս հաստատուեցաւ:

Կամսարականներու այլ ճիւղ մըն ալ Անիի անկումէն ետք Ներսէս Կամսարականի առաջնորդութեամբ փոխադրուեցաւ Մարմաշէն գիւղը, ուրկէ ժամանակ մը ետք հետանալով Սեւանի Գոմաձոր գիւղը հաստատուեցաւ, այնուհետեւ՝ եղիվարդ գիւղը, ուրկէ յետոյ Աշտարակ հաստատուեցաւ: Ոմանք ալ գացին Երեւան եւ Եսապուրականէն ծառայութեան մէջ մտան: Աշտարակ հաստատուած է Իրանի Ջհան շահին ծառայութեան մտած Մարգար Կամսարականի սերունդը կոչուեցաւ Շահագիզեան ազգանունով, որ շահին սիրելի կը նշանակէ: Կամսարականներու ճիւղ մըն ալ հետագային Եգիպտոս հաստատուեցաւ:

Արեւելեան Հայաստանի Ռուսական կայսրութեան միացումէն ետք Կամսարականներ համապատասխան փաստաթուղթերով յաջողեցան հաստատել իրենց ազնուականութիւնը: Անոնցմէ յիշենք Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոս (Շահագիզեան ճիւղէն), ուսական բանակի գորպարներ՝ իշխաններ Կոստանդին եւ Պետ-

րոս Կամսարական եղբայրները, որոնք ուս-քրքական 1877 - 1878ի պատերազմին հերոսներէն դարձան:

Կամսարական (եւ Շահագիզեան) գերդաստանի սերունդներ ներկայիս բազմաթիւ են Հայաստանի եւ արտասահմանի մէջ,

ՏԱՏԵԱՆ ՆԵՐԸ աւանդութեան համաձայն Արծրունիներէն սերած են. անոնք Վասպուրականի Սեներքիմ քաղաքի սերունդէն եղած են եւ անոր հետ 1021ին Սեբաստիա գաղթած են: Անոնցմէ Պերոզ մօտաւորապէս 1350ին Սեբաստիայէն Ակն փոխադրուեցաւ: Ակնի Կամսարակապ զիւղի եկեղեցւոյ մկրտարանին մէջ պահուած էին Տատեաններու նախնիներուն բոլոր անունները՝ ԺԳ. դարէն մինչեւ ԺԹ. դար: Տատեաններ Պոլիս հաստատուելով հռչակաւոր դարձան օսմանեան արքունիքին եւ պետական շրջանակներու մէջ եւ միաբնութեան աստիճան ձեռք ձգեցին: Անոնց սերունդները մինչեւ Ի. դարու կեսերը ազդեցիկ էին Պոլսոյ մէջ, ոմանք ալ ցրուեցան դէպի Ամերիկա, Ֆրանսա եւ այլն:

ԿԻԻԼՊԵՆ ԿԵԱՆ ՆԵՐԸ աւանդութեան համաձայն Ռշտունի նախարական տունէն սերած են եւ Թեոդորոս Ռշտունիի զաւկին՝ Վարդ Պատրիկի սերունդն են: Անոնք Սեներքիմ քաղաքին հետ Վասպուրականէն գաղթելով Կեսարիա եւ Թալաս հաստատուած են եւ իրենց Վարդ Պատրիկը ազգանունը բերեցին հնչումով Կիւլպիկեանի վերածած են: Առեւտրաւոր սերունդները, տարբեր երկիրներու մէջ քանի մը հարիւր հոգի կը հաշուեն:

ԱՊՈՐՅԱՆ ՆԵՐԸ աւանդութեան համաձայն Բագրատունիներէն սերած են. Անիի անկումէն ետք անոնք հոնկէ հետացան եւ Կարին հաստատուեցան. անոնց նահապետ Ալիփար Ապրո 1521ին Պելլարտ փոխադրուեցաւ: Անոր թոռը Արրահամ օսմանեան պետութեան չեկպիտեան տիրող ստացաւ: Ապրոյեանները մեծ մասամբ Զմիւռնիա հաստատուեցան եւ երեւելի առեւտրականներ դարձան: Ռուսիոյ Մեծը Պետրոս ցարը եւս հաստատեց անոնց ազնուականութիւնը: Ապրոյեաններուն մէկ ճիւղը Եգիպտոս հաստատուեցաւ, ուր եւս նանչցուեցաւ անոնց ազնուականութիւնը. անոնցմէ էր Եգիպտոսի արաքիւն գործոց նախարար Տիգրան փա- ա՛ւ Ապրո:

ԱՐԴԵՕՔ ՊՈՒՇ ԱՇԽԱՐՀԸ...

Շարունակում՝ 6րդ էջին

Պուշ պէտք է հարցնել, թէ ի՞նչ կ'ուզեն «հարե- կիչները», ի՞նչն է, որ զիրենք այդքան ջղային կը դարձնեն: Ան կրնայ յայտնաբերել, որ անոնք այդքան հետաքրքրուած չեն «արեւմտեան քաղաքակրթու- թիւնը կործանելով», քան՝ իրենց երկիրներուն եւ ժո- ղովուրդներուն արդարութիւնը ապահովելով:

Տեղեկահաւաքի բարելաւումով, ֆիզիքական ապահովական միջոցներ խտացնելով, զինուորա- կան ուժ ցուցադրելով եւ «հարեկիչական բիլլներու» դէմ նախաարձակ ըլլալով՝ կարելի պիտի չըլլայ ար- գիւել նոր յարձակումներ: Այդ մէկը կարելի կ'ըլլայ իրագործել շրջանի ժողովուրդներուն ցուեր ճանչ- նալով եւ այդ գծով յարմար լուծումներու դիմելով:

Միացեալ Նահանգներուն կրկնակիօրէն պէտք է ըսուի, թէ «հարեկիչութեան արմատները» չեն գտնուիր իսլամական ընկերութիւններուն մէջ կամ ժողովրդավարութեան արեւմտեան օրինակը որդե- գրելու արարական երկիրներու ձախողութեան մէջ: Անոնք կը գտնուին ամերիկեան քաղաքակրթութեան մէջ, պաղեստինցիներուն դէմ իսրայէլեան ճնշումնե- ռուն պաշտպանութեան, Մոցի պատերազմէն ետք 12 տարի իրաքը պատժելուն եւ շրջանային մենատիրա- կան իր ծրագիրներու իրագործման համար արաբա- կան երկիրներու մէջ իր զինուորական ներկայու- թեան մէջ: «Հարեկիչութեան արմատները» նաեւ կը գտնուին այն իրողութեան մէջ, որ Միացեալ Նա- հանգներ իսլամ ծայրայեղականներու ամբողջ սե- ռունը մը գորաշարժի ենթարկեց՝ Նորհարկին Միու- թեան դէմ Աֆղանիստանի մէջ, ուրկէ ամօթահար հե- ոացաւ, երբ խորհրդայինները քաշուեցան երկիրը ձգելով աւերակ վիճակի մէջ, զո՞ւ պատերազմի իշ- խաններու եւ թմրեցուցիչի վաճառականներու ձեռ- քը:

Այսօր ձորձ Պուշ պէտք ունի հասկնալու, որ իր «հարեկիչութեան դէմ պայքարը» պիտի յաղթէ կամ պարտուի պաղեստինեան գրաւեալ շրջաններուն մէջ: Ան իր զուլեւը դարձուց, երբ իսրայէլի վարչա- պետ Արիէլ Շարոն խախտեց իր հակահարեկիչական ծրագիրները:

Կարծես ան չի կրնար հասկնալ, որ Շարոնի կողմէ Եսաթ Արաֆատի պաղեստինեան իշխանութեան կոր- ծանուցումը նպատակաւ «հարեկիչական յարձակումնե- ռու արգիլումը չէր (իրողութեան մէջ Շարոն դիտ- մամբ հրահրեց զանոնք), այլ՝ անկարելի դարձնել որե- ՛ւէ բանակցութիւն, որ կրնայ առաջնորդել պաղես- տինեան պետութեան ստեղծումին:

Վայրագութիւնները վերջ կը գտնեն միայն այն ատեն, երբ իսրայէլ ետ կը քաշուի իր գրաւած հողե- րէն: Միայն Միացեալ Նահանգներն են, որ կրնան իրականացնել այդ մէկը, իսկ շրջելու պարագային, կրնան գինը սուղ վճարել:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԽՕՍՔԸ...

Շարունակում՝ 4րդ էջին

քարկղի շահերէն մեկ- նած ճիգերուն, որոնք կը փորձեն Միացեալ Նա- հանգներու քաղաքակր- ցութիւնը Ազգայնականին ի նպաստ թեքել:

Մենք կը գորացնենք Հայաստանի քարոզչութիւնը աճող առեւտուրը եւ ներդրումները, հզոր եւ աշխուժ տնտեսութիւն մը, զուրկ կաշառակե- րութենէ, արտաքին օժանդակութիւն Հայաս- տանին, ուղղակի օժան- դակութեան շարունակ- կութիւն Լեռնային Ղա- րաբաղին եւ երկկողմա- նի համաձայնագիրներ, որոնք կը նպատակադրեն զարգացնել Միացեալ Նահանգներու եւ Հա- յաստանի տնտեսական գործակցութիւնը:

Մենք կը պայքարինք ապօրէն եւ անբարոյ թրջակներ եւ ագրիւրա- կան շրջափակումներուն դէմ, ինչպէս նաեւ անոնց ճիգերուն, որոնք կը մի- տին Հայաստանը մեկու- սացնել կասպեան ուժա- նիւթի բնագաւառի նպատաներէն:

Վերոյիշեալ իւրաքան- չիւր խնդիրն շուրջ մեկ- կը հանդիպինք հզոր ներ- կական կարելիութիւն- ներով օժտուած ընդդի- մութեան: Մեր դէմ կը տեսնենք համախմբուած

ամերիկեան քաղաքական համակարգի ամէնէն ազ- դեցիկ խմբակները:

Այս ծանր ճնշումին տակ փորձութիւնը միշտ կայ յանձնուելու, տեղի տալու, եւ աւելի գէշը, ճնշումին տակ կըքուի եւ մեր իտէպնէնք զիջելու եւ երեւութապէս մօտա- կայ շահերը փոխանակե- լու մեր հեռակայ բարօ- րութեան եւ զոյատեւ- ման: Ասոնք սխալ ընտ- րութիւններ են, երբ ղապուտին Հայկական Ցեղասպանութեան, Լեռ- նային Ղարաբաղին կամ որեւէ այլ կենսական խնդիրի, որ այսօր մեր ազգը կը դիմազարէ:

Այստեղ երբ քննարկ- ման առարկայ պիտի դարձնենք, թէ ի՞նչպէս պիտի առաջնորդենք մեր ազգը դէպի նոր ժամա- նակաշրջան, ի՞նչպէս պի- տի վարուիչը արագօրէն փոխուող աշխարհաքա- ղաքական գետնի ստեղ- ծած ծանր ճնշումներուն հետ, պէտք է միշտ յի- շենք, որ կորով, նկարա- գիր եւ ողնաշար այսօր անհրաժեշտութիւն էին Աւարայրի, Տէր Զօրի անապատներուն, Սար- դարապատի դաշտերուն կամ Շուշիի ժայռերուն վրայ:

Մեր պատմութեան զիրքերէն, մեր մեծ հայ- րերու պատմութիւննե- րէն եւ նոյնիսկ մեր կանցքերուն ընթացքին մենք տեսնք հսկայա- կան փոփոխութիւններ մեր ազգի դիմազարուած մարտահրաւէրներուն մէջ: Միակ կայուն արժէ-

քը, որ մնաց, Հայաստա- նի զոյատեւման գինն է, հայ անհատներու ծառա- յութիւնը եւ զօհողու- թիւնը իրենցմէ աւելի կա- րեւոր դատի մը ի նշան: Թառաջիկայ ամիսնե- րուն եւ տարիներուն, պէտք է հաւատարիմ մնանք այս սկզբունքին եւ պահենք մեր հաւատ- քը՝ հանդէպ մեր ազգա- յին արժէքները:

Պէտք է մնանք ինք- նավաստան մեր ժողովուր- դային խորիմխի կորո- վին, ուժին, մեր նոր սե- րունդի ղեկավարութեան իմաստութեան, մեր դիր- քորոշումներու բարոյա- կանութեան եւ հայ ժո- ղովուրդի նուիրուածու- թեան՝ մեր ազգային դա- տին:

Ո՛ր երկրի մէջ ալ ապ- րինք, պէտք է անհատա- պէս եւ ուղղակիօրէն մասնակից ըլլանք քաղա- քական եւ հասարակա- կան գործընթացներուն, որոնք կրնան յառաջխա- ղացք արձանագրել Հայ Դատին համար: Պէտք է կիրքով, ուժականու- թեամբ եւ խելամուտ- թեամբ առաջ մղենք մեր ժողովուրդին դաւանած գաղափարները: Պէտք է, միասին այսօր հոս եւ այս դահլիճէն մեկնելէն երկար ժամանակ ետք, աշխատինք հպարտօրէն կրել մեր սերունդին պա- տասխանատուութեան բեռը, որպէսզի յաջողիք իրականացնել մեզի եւ յաջորդող սերունդնե- րուն համար Ազատ, Ան- կախ եւ Միացեալ Հայաս- տանի խոստումը: Շնորհակալութիւն:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահիշմերու փակման սակագինները հետեւեալներն էին երկվ.	31,50 - 31,50 լ.ն.
Սուրիական թղթուսիկ	50,00 - 51,00 լ.ն.
Իրաքեան տինար	3996,00 - 4000,00 լ.ն.
Պահիլէյեան տինար	4953,42 - 4957,42 լ.ն.
Քուէյթեան տինար	2124,42 - 2128,42 լ.ն.
Յորդանանեան տինար	408,43 - 412,42 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	399,90 - 403,99 լ.ն.
Սէյուտեան դիալ	323,72 - 327,72 լ.ն.
Օմանեան դիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Քաթարեան դիալ	412,15 - 416,15 լ.ն.
Եգիպտական կիւնէ	323,72 - 327,72 լ.ն.
Սնգապուրեան արծիւն	2197,70 - 2202,11 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	964,35 - 968,52 լ.ն.
Թրքական լիւրա	3,62 - 3,64 լ.ն.
Կիպրական փաունտ	2452,85 - 2356,17 լ.ն.
Ճափոնական հալպար եֆու	12,17 - 12,38 լ.ն.
Ափրիկեան հալպար ֆրանք	2450 - 2451 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	981,40 - 985,85 լ.ն.
Աւստրալիական տոլար	859,85 - 863,70 լ.ն.
Եւրո	1423,95 - 1427,16 լ.ն.

● ՈՍԿԻ	110,000 - 120,000 լ.ն.
Անգլիական մէկ ոսկի	89,000 - 99,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	108,000 - 118,000 լ.ն.
Մեքսիկական փէսոս	532,000 - 552,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ	
ձոյլ ոսկի	15,200,000 - 15,700,000 լ.ն.
Մէկ օսու ոսկի	320,68 - 324,72 \$
Մէկ օսու արծաթ	4,93 - 4,97 \$

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում		
Ա. կարգի	4 2/8	4 2/8
Բ. կարգի	4 4/8	4 4/8
բաժնետիր		

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ	
Լոնտոնի սակարանին մէջ, դրամահիշմերու փոխանակման սակագինները հետեւեալն էին երկվ կէսօրին.	
Ամերիկեան տոլարի փոխանակման սակագին	0.9426
Եւրո	1.5397
Քանադական տոլար	1.5643
Չուիցերիական ֆրանք	125.39
Ճափոնական եֆու	9.715
Նորվեգիական քրոն	7.8792
Դանիական քրոն	7.882
Մէկ սքեյլին	1.4644

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Ընտանեկան կարգ մը մտահոգութիւններ պիտի խանգարեն ձեր լաւ տրամադրութիւնը: Կատարեցէք հարկ եղած կարգադրութիւնները:

☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Պիտի հանդիպիք կարգ մը անձերու, որոնց ար- ժեքաւոր բարեկամութիւնը պիտի վայելէ: Օրը այսպիսով պիտի ըլլայ օգտաշատ:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Ձեր տնտեսական վիճակը սկսած է բարելաւուիլ եւ ձեզի կ'ընձեռնուի նոր միջոցներ՝ ձախողութիւն մը հետագային: Օրը հաճելի է:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Պիտի վայելէք ուրախ օր մը, գոր չէիք ակնկա- յել: Ձեր նուազագոյն փափաքները պիտի կատար- լին: Մնացէք յուսալից:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Մթնշաղկի օրը, ինչ կը վերաբերի բարեկամու- թեան հարցին: Փորձեցէք շատ անձերու հանդիպիլ, որովհետեւ պիտի ուրախանաք անոնցմով:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Եթէ ձեզ անհարգած էք ձեր աշխատանքէն, գացէք հանգստանալու, բայց՝ առանց անյարմար արտա- յայտուելու ունենալու: Պահեցէք ձեր դիրքը եւ համ- բերեցէք:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Օրը յատկացուցէք դաստիարակչական գրադու- մներու, ինչպէս ընթացող կամ ժապաւեցի մը ներ- կայացման ներկայ ըլլալու: Կարիքը ունիք ձեր առօրեային գուրու գալու:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Օրը հետաքրքրական պիտի անցնի, իսկ եթէ բար- կանք որեւէ հարցի համար, զսպեցէք ձեր շիջերը եւ գոհ պիտի մնաք այդպէս ընելով:

☆ **ԱՆԵՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Թէ եւ ձեր տնտեսական վիճակը վատ չէ, այսու- հանդերձ ձախուտ պահուց եղիք ուշադիր եւ ժուժ- կալ: Օրը պիտի անցնի գուրաբ:

☆ **ԱՅՄԵՂՁԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ամուսնական եւ ընտանեկան կեանքի մէջ իւրա- քանջիւր անձ պիտի կատարէ իր պարտականու- րիւնը: Պիտի իմանաք լաւ լուրեր: Երկուրով յաղ- թական էք:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Աշխատանքի մէջ շատ եռանդուն էք, կը կառա- վարէք ձեր շուրջիները: Օգտուեցէք օրուան լաւ վիճակէն, որովհետեւ նման օրեր քիչ կու գան:

☆ **ՋՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Եթէ ձեր սիրտը սիրոյ կարիքը ունի, այսօր, շնորհիւ հանդիպումի մը, առիք պիտի ունենաք ձեր բաղձանքը իրագործելու:

ՕՐԱՏԵՏՐ

ԸՆՈՒՏԵՍԻԼ

10:00 - Սապահօ	13:00 - Մաքու	14:00 - Ֆիլմ ինֆօ	14:00 - Անգլերէն լուրեր	10:40 - Բարի ախորժակ	10:40 - Հայրիկ
13:00 - Մաքու	13:00 - Մաքու	14:20 - Ֆրանսերէն լուրեր	14:20 - Ֆրանսերէն լուրեր	11:00 - Հայրիկ	11:00 - Հայրիկ
		14:40 - Հայերէն լուրեր	14:40 - Հայերէն լուրեր	11:20 - Ռուսերէն +	11:20 - Ռուսերէն +
		15:05 - Լուրեր	15:05 - Լուրեր	12:00 - Լուր (երաժշտական	12:00 - Լուր (երաժշտական
		15:30 - Արաբերէն ֆիլմաշար	15:30 - Արաբերէն ֆիլմաշար	տարբերակ)	տարբերակ)
		16:30 - Թելեթրապիլ	16:30 - Թելեթրապիլ	12:05 - Երաժշտական ալիք	12:05 - Երաժշտական ալիք
		17:00 - Ըզդար ըզպար	17:00 - Ըզդար ըզպար	13:00 - Լուր	13:00 - Լուր
		17:30 - Արաբ. ֆիլմաշար	17:30 - Արաբ. ֆիլմաշար	13:05 - Top 10 (կարճ	13:05 - Top 10 (կարճ
		18:30 - Այ Ֆախ	18:30 - Այ Ֆախ	տարբերակ)	տարբերակ)
		20:00 - Արաբերէն լուրեր	20:00 - Արաբերէն լուրեր	13:20 - Ալուր (պզգային երգ)	13:20 - Ալուր (պզգային երգ)
		20:30 - Ռուսերէն	20:30 - Ռուսերէն	13:35 - Non-stop	13:35 - Non-stop
		մուսուլմանական	մուսուլմանական	13:55 - Նորատետր	13:55 - Նորատետր
		20:35 - Եւր պատու երախ	20:35 - Եւր պատու երախ	14:00 - Լուր (երաժշտական	14:00 - Լուր (երաժշտական
		21:30 - Արաբ. ֆիլմաշար	21:30 - Արաբ. ֆիլմաշար	տարբերակ)	տարբերակ)
		22:30 - Քրայսլ սին	22:30 - Քրայսլ սին	14:05 - Երաժշտական ալիք	14:05 - Երաժշտական ալիք
		ինվէստիկէյշն	ինվէստիկէյշն	15:00 - Հայրիկ	15:00 - Հայրիկ
				15:20 - Մուլտսերիալ	15:20 - Մուլտսերիալ
				«Վերջին պայտասներ»	«Վերջին պայտասներ»
				15:35 - Իմ սեր, իմ հուստ,	15:35 - Իմ սեր, իմ հուստ,
				իմ եկեղեցի	իմ եկեղեցի
				16:00 - Հեռուստասերիալ	16:00 - Հեռուստասերիալ
				«Միտոյ կախարհանք»	«Միտոյ կախարհանք»
				17:00 - Երեկոյեան երեւան	17:00 - Երեկոյեան երեւան
				17:20 - Հարցամարտ	17:20 - Հարցամարտ
				17:50 - Մանրամասներ	17:50 - Մանրամասներ
				18:00 - Այլուր	18:00 - Այլուր
				18:10 - Կարճամտերաժ ֆիլմ	18:10 - Կարճամտերաժ ֆիլմ
				«Տերն ու ծառան»	«Տերն ու ծառան»
				18:35 - Տուն-տունիկ	18:35 - Տուն-տունիկ
				19:00 - Հայրիկ	19:00 - Հայրիկ
				19:45 - Արաբիկ նշան	19:45 - Արաբիկ նշան
				20:00 - Փաստագրական	20:00 - Փաստագրական
				ֆիլմ «Ո՞վ է վարպետը»	ֆիլմ «Ո՞վ է վարպետը»
				21:40 - Յուրաքանչեւ	21:40 - Յուրաքանչեւ
				հայրիկ	հայրիկ
				23:20 - Հայրիկ (տուներէն)	23:20 - Հայրիկ (տուներէն)
				23:25 - Հայրիկ (անգլերէն)	23:25 - Հայրիկ (անգլերէն)
				23:30 - Երեկոյեան երեւան	23:30 - Երեկոյեան երեւան
				23:45 - Այլուր	23:45 - Այլուր
				00:00 - Լուր (երաժշտական	00:00 - Լուր (երաժշտական
				տարբերակ)	տարբերակ)
				01:00 - Լուր (երաժշտական	01:00 - Լուր (երաժշտական
				տարբերակ)	տարբերակ)
				01:05 - Top 10 (կարճ	01:05 - Top 10 (կարճ
				տարբերակ)	տարբերակ)
				01:20 - Ալուր (պզ	

ԹՈՒՐՔԻԱ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋՈՒԺ ԿԸ ԿՈՒՏԱԿԷ

Կիպրոս երեկ Թուրքիան ամբաստանած է բաժնուած կղզիին վրայ ուժեր կուտակելու լանցանքով՝ աւելի եւս լարելով մթնոլորտը, մինչ կենսական, սակայն չափապանց դանդաղաշարժ խաղաղութեան բանակցութիւններ տեղի կ'ունենան:

Յոյն կիպրացի պաշտօնատարներ յայտնած են, որ թրքական 5500 ուժեր դրկուած են Կիպրոս վերջին քանի մը շաբաթներուն՝ թուրք կիպրական շրջանին մէջ ուժերու թիւը շուրջ 40 հազարի բարձրացնելով:

Պաշտպանութեան նախարար Սոքրաթիս Հախքոս յայտնած է, որ Թուրքիա «չիղերու պատերազմ մը» կը մղէ, իսպախելու համար Կիպրոսի Եւրոպական Միութեան անդամակցութիւնը:

Յունուարին սկսած բանակցութիւնները տասնամեակներէ ի վեր լաւագոյն առիթը կը նկատուին իսկական համաձայնութիւն մը ապահովելու համար Կիպրոսի տագնապին, նախքան Ե. Միութեան որոշումը՝ հաւանաբար այս տարեվերջին, Կիպրոսը ներառելու ընդարձակման յառաջիկայ իր քայլին, որ 2004ին տեղի պիտի ունենայ:

Թուրքիա, որ նոյնպէս կ'ուզէ Ե. Միութեան անդամակցել, յայտնած է, որ կրնայ հիւսիսային Կիպրոսը «կցել», եթէ միջազգային ճանաչում վայելող Նիկոսիոյ կառավարութիւնը Միութեան անդամ ընդունուի:

Կիպրոսի արտաքին գործոց նախարարը օր մը առաջ ըսած է, որ Թուրքիոյ վարչապետին հիւանդութիւնը կրնայ նուազեցնել խաղաղութեան լուծում մը գտնելու հաւանականութիւնը:

Լիքսամպուրկի մէջ Ե. Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն մասնակցելէ ետք, Քատուխտէս ըսած է, որ եթէ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ իր կեցումով փոխէ, ան առիկա պիտի ընէ որովհետեւ Անգարա այդպէս պիտի հրահանգէ: «Այժմ Անգարայի մէջ իշխանութեան պարապ մը կայ եւ Տենքթաշ միշտ իր ուզածը կ'ընէ երբ Թուրքիային յստակ վարքագիծ մը չի գար», ըսած է ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՖՂԱՆԻՍԱՆ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐՆ ՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵՆ ԸԱՄԻՏ ԶԱՐԶԱՅԻ

ՔԱՊՈՒԼ, 11 (ՌՈՅԹԸՐԸ).- Աֆղանիստանի նախկին նախագահը Երեքշաբթի օր ներկայ գտնուած է երկար տեւելէ ի վեր սպասուող «Լոյս ձիրք»ին, ընկերակցութեամբ Համիտ Քարգայի փոխանցման կառավարութեան ղեկավարներուն՝ միասնականութեան ցուցադրութեամբ մը:



Զահիր Շահ, Համիտ Զարգայի եւ Ապտալլա Ապտալլայի հետ

Թագաւորը՝ Զահիր Շահ, խօսք առած է ցեղախումբերու այդ ժողովին՝ շնորհակալ թէ որեւէ փոփոք չունի թագաւորութիւնը վերահաստատելու եւ հաստատելով իր գորակցութիւնը՝ Քարգայի ղեկավարութեան:

Ան թելադրած է պատերազմներուն ժողովին գերագոյն շահերը նկատուենալ՝ աւելցնելով, որ իսլամական արժէքներով ղարջ հիմնուած ազգային միասնականութիւնն ու ժողովրդավարութիւնը իր իտէալներն են:

Աֆղանիստանի բոլոր շրջանակներէն շուրջ 1550 պատուիրակներ երէկ հսկայ վրանի մը տակ սկսած են իրենց ժողովին՝ հետզհետէ թափ ստացող լարուածութեան ծիրէն ներս, նախ-

կին թագաւորին ընդհանրապէս փաշտուն հետեւորդներուն եւ հիւսիսային փոքրամասնութեանց միջեւ, որոնք տիրական են Քարգայի կառավարութեան մէջ:

Յառաջիկայ 18 ամիսներուն երկիրը կառավարող ղեկավարի մը ընտրութիւնը՝ նախքան երեսփոխանական ընտրութիւններու կայացումը, օրակարգի առաջին նիւթն է: Այդ հարցով հատուածներու միջեւ տանկէներու ուղացում են ժողովին սկսուածը (անիկա պէտք է երկուշաբթի օր սկսէր):

Ժողովը պիտի աւարտի Յունիս 16ին:

Կը նախատեսուի, որ Քարգայ ընտրուի նախագահ: Ան պիտի հսկէ սահմանադրութեան մը վշակուածին եւ երկիրը պատրաստէ երեսփոխանական ընտրութիւններուն:

Բանալի գորակցութիւն մըն է նախկին նախագահ Պուրհանուտտին Ռապպանիի քայլը: Քարգայի մրցակից Ռապպանի իր թեկնածութիւնը յետս կոչած է՝ ի նպաստ Քարգայի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԸՍՏ Մ. ՆԱՅԱՆԳԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

«ՍԱՏՏԱՍ ՀԻՒՄԷՅՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՍԱԽՕՍ ՄԸՆ Է»

Միացեալ Նահանգներու յաշտօնաւորութեան նախարար Տոնըլըր Ռամսֆելտը թափ քրտուա Մարտի 28-ին ղեկավարելու ամերիկեան հեծաբորտեան «միջազգային մակարդակով սպախօս» անուանելով Իրաքի նախագահը: Ռամսֆելտը կը հակադարձէր իրաքեան հերքումի յայտարարութեան, ըստ որուն Պաղատար հաւաքական քանդումի զէնքեր չունի:

Միացեալ Նահանգներ ամիսներէ ի վեր ամէն առիթով կը յայտարարէր, թէ Իրաք հաւաքական քանդումի զէնքեր ունի եւ նոր ծրագիրներ ալ կը մշակէ: Մեկնաբաններ կ'ըսեն որ Ռաշիմկըրը թափ կու պայ այս ոճին, արդարացնելու համար Իրաքի ղեմ զինուորական գործողութիւն մը, որուն նոյապակը յիփի ըլլայ փառալել Մարտի 28-ին:

Ռամսֆելտը, որ կը խօսէր Պահիէյն այցելութեան ընթացքին, շեշտեց, որ Մարտի 28-ը սրէ եւ իրականութիւնները կը խեղաթիւրէ, երբ կը յայտարարէ, թէ հաւաքական քանդումի զէնքեր չունի:

Միւս կողմէ, նախագահ ձորձ Պուշի կառավարութիւնը կ'առաջարկէ ուր միլիոն փոլար յարկացնել Իրաքի ընդդիմադիր Ազգային Խորհուրդին, յայտնեցին յաշտօնաւորութեան աղբիւրները:

Արտաքին գործոց նախարարութիւնը կ'ուզէ ջնջել նիւթական յարկացումի ծրագիրը, մինչ իրաքեան ընդդիմադիր ճակապը կենսական կը նկատէ զայն իր ծրագրած գործողութիւններուն համար, հաղորդեց ընդդիմադիր ճակապին մօտիկ աղբիւր մը: Արտաքին գործոց նախարարութիւնը մինչեւ Մայիսի աւարտը կազմակերպող գործողութիւններուն համար գումարներ փոխանցած է իրաքեան ընդդիմադիր ճակապին, որ աւելի երկար ժամանակամիջոցի վրայ երկարող յարկացումներու համաձայնագիրի մը մասին կը բանակցի: Ընդդիմադիր ճակապը կ'ըսէ, որ Պուշի կառավարութիւնը փարսաբարձիք է այս հարցին մասին:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պաուլըր ըսաւ, որ Իրաքի Ազգային Խորհուրդին ուր միլիոն փոլար առաջարկուած է, սակայն ընդդիմադիր ճակապը փոսկարին չէ դադարաւանած այս առաջարկին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵՒՐՈՊԱ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐՈՒ ՎՏԱՆԳԻՆ ԴԻՄԱՑ

Կ'ԸՍԷ ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Ֆրանսայի պաշտպանութեան նախարար Միշել Ալիօ - Մարի երեկ յայտնած է, որ եւրոպացի քաղաքաիններ կենսաբանական եւ նոյնիսկ կորիպային բնոյթի ահաբեկչական յարձակումներու սպասարկիքը կը դիմագրաւէ:

Ամերիկեան իշխանութիւնները Երկուշաբթի օր յայտարարած էին, թէ դաւ մը քողակերծած են՝ Մ. Նահանգներուն վրայ այսպէս կոչուած «աղտոտ ուժեր»ով մը յարձակելու համար:

Ալիօ - Մարի ըսած է, որ Եւրոպա նման սպանալիքներ կը դիմագրաւէ: «Անշուշտ Ֆրանսա սպանալիքի տակ կը գտնուի, այնպէս ինչպէս՝ եւրոպական բոլոր մեծ երկիրները» յայտնած է ան «Էօրոնի» ձայնասփիւռի կայանին:

«Կը գտնուինք մեծ անորոշութեան, նոյնիսկ վտանգի ժամանակաշրջանի մը մէջ: Ահաբեկչութիւնը իրականութիւն մըն է, որ կրնայ հարուածել ունի մէկը, որեւէ տեւն», աւելցուցած է ան:

ՊՈՒՇԻ ԶՈՒՇԱՅՈՒՄԸ

Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշի շնորհակալ յայտնած է, որ «սահաբեկչութեան իմբակներու կողմէ հաւաքական քանդումի կէսերու ձեռքբերումը՝ հետզհետէ աւելի մեծ վտանգ կը սպառնայ, Երկուշաբթի օր վրայուցուած է, թէ անոնք «աղտոտութիւն» կրնան գործածել՝ պատուիրակ սփռող

երկիրներ հարուածելու համար:

Նոյն օրը իշխանութիւնները յայտնած էին, թէ ձեռքարկուած են «Քայիտա» մէկ անդամը՝ Ապտալլա Մուհամմադը, որ կը ծրագրէր Մ. Նահանգներու վրայ «աղտոտ ուժեր»ով մը յարձակել:

Փոխ նախագահ Տիբ Չէյի Երկուշաբթի օր յայտնած է, թէ Մ. Նահանգներ պատրաստ են նախալարուած ըլլալու, որովհետեւ կանխարգիլման քայլեր անօգուտ պիտի ըլլան «Քայիտա»ի նման ընդդիմադիր խմբակներու դէմ:

«Ծանրակշիռ վտանգներ կը կուտակուին մեզի դէմ եւ քայլերու չդիմելը պարտաւէ պիտի աւելի պիտի մօտեցնէ», շեշտած է ան՝ աւելցնելով, որ Ռաշիմկըրը «պիտի չսպասէ, որ չափապանց ուշ ըլլայ»:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլըր Ռամսֆելտը երեկ յայտնած է, որ Եւրոպայի միջոցով 4000 Պահիէյի եւ աւելի քան 3000 Քարգայի մէջ:

Միւս կողմէ, մարտքի բարձրաստիճան պաշտօնատար մը երեկ յայտնած է, թէ երկիրը իշխանութիւնները ձեռքարկուած են Եւրոպայի միջոցով 4000 Պահիէյի եւ աւելի քան 3000 Քարգայի մէջ:

Երկուշաբթի գիշեր, մարտքի պաշտօնատար մը յայտնած էր, թէ 3 սեղանի ձեռքարկուած է՝ պանոնք «սահաբեկչական» յարձակումներ պատրաստելու յանձնարարով ամբաստանելով:

Պուշի խմբակները, որ ամերիկացի քաղաքացի է, իրականում իրականութեան վրայ նախապատեւելիք իշխանութեանց կեցածը:

ԾՈՅԻ ՄԵՋ ԱՍԵՐԿԵԱՆ ՈՒՇԵՂ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլըր Ռամսֆելտը երեկ յայտնած է, որ Ծոցի շրջանին մէջ այժմ աւելի մեծ թիւով ամերիկեան ուժեր կան քան Աֆղանիստանի մէջ ամերիկեան հակահարձակչական պայքարին սկսման օրերուն:

Ան կը խօսէր թղթակցներու, Քարգայի մարտքաղաք Տոնայի մէջ:

Մ. Նահանգներ շուրջ 10 հազար պիւտր ունին Քուէյթի, աւելի քան 4000 Պահիէյի եւ աւելի քան 3000 Քարգայի մէջ:

Միւս կողմէ, մարտքի բարձրաստիճան պաշտօնատար մը երեկ յայտնած է, թէ երկիրը իշխանութիւնները ձեռքարկուած են Եւրոպայի միջոցով 4000 Պահիէյի եւ աւելի քան 3000 Քարգայի մէջ:

Երկուշաբթի գիշեր, մարտքի պաշտօնատար մը յայտնած էր, թէ 3 սեղանի ձեռքարկուած է՝ պանոնք «սահաբեկչական» յարձակումներ պատրաստելու յանձնարարով ամբաստանելով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆԻԻ ՏԵԼԷԻ - ԻՍԼԱՄԱՊՈՍ ԼԱՐՈՒՄԸՈՒԹԵԱՆ ՄԵՆՍԱՅՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՈՎ ՍԸ

ՀՆԴԿԱԿԱՆ ՆԱԲԱՏՈՐՍԸ ԴԵՌԱՅԱՒ ՓԱՔԻՍԱՆԻ ԶՈՒՐԵՐՆԵՆ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլըր Ռամսֆելտը Նիւ Տեյիի ժամանումէն քանի մը ժամ առաջ, Հնդկաստան - Փաքիստան պատերազմ մը սպաննացող տագնապը մեղմացնող քայլ մը առաւ՝ Փաքիստանի ջուրերէն հեռացնելով նաւատորմը:

Հնդկաստանի ծովուծի բանբերը յայտնեց, որ արեւմտեան նաւատորմին հրահանգուած է դադարեցնել հսկողութեան նաւարկութիւնը Արաբական Ծովուն մէջ, Փաքիստանի ջուրերուն վրայ՝ վերադառնալով իր նաւահանգիստը: Բանբերը նախատեսեց, որ նաւատորմը շուտով Պոմպէյ վերադառնայ:

Հնդկաստանի կառավարութեան մէկ աղբիւրը հաղորդեց նաեւ, որ Նիւ Տեյիի նոր դեսպան մը պիտի նշանակէ Փաքիստանի մէջ՝ փոխարինելու համար դեսպանը, որ վեց ամիս առաջ տուն կանչուած էր:

Ռամսֆելտը, որ Պահիէյին Նիւ Տեյիի ուղղուեցաւ, ըսաւ որ կը թուի թէ Փաքիստանի եւ Հնդկաստանի միջեւ լարուածութիւնը մեղմացած է: Կացութիւնը չի վատթարանար, ուրեմն սակա լաւ նշան է, դիտել տուա Ռամսֆելտը: Փաքիստանի րեւէ մեկնաբանութիւնը չկատարեց միջկական նաւատորմը հեռացնելու լուրին մասին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍՕՏ ՕՐԵՆ

ԻՐԱՆ - Ե. ՄԻՈՒԹԻՒՆ ԱՌԵԻՏՈՒՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

ԹԵՎՐԱՆ, 11 (ՌՈՅԹԸՐԸ).- Պեյճիքայի արտաքին գործոց նախարար Լուի Միշէլ, որ Թեւրան կը գտնուի պաշտօնական այցելութեան մը համար, ըսաւ որ լաւատես է Եւրոպական Միութեան եւ Իրանի միջեւ քաղաքական ու առեւտուրի համաձայնագիր մը իրականացնելու կարելիութեամբ, հաղորդեց ԻՐԱՆ լրատու գործակալութիւնը:

Առեւտուրի եւ գործակցութեան համաձայնագիրը կարելի է քայլ մը պիտի նկատուի Իրանի հետ կապերուն մէջ փոփոխութիւններ յառաջացնելու եւրոպական ճիգերուն համար: Ե. Միութիւնը Միացեալ Նահանգներէն տարբեր կեցումով կ'որոշեց Իրանի հանդէպ, որ ըստ Ռաշիմկըրի, մաս կը կապ մէ «չարութեան առանցքի մը»:

Միշէլ հաւաստեց, թէ մօտ օրէն պիտի ստորագրուի առեւտուրի եւ գործակցութեան համաձայնագիրը Ե. Միութեան եւ Իրանի միջեւ: Միշէլ Իրանի մէջ տեսակցութիւններ պիտի ունենայ նախագահ Մոհամմադ խաթեմիի եւ արտաքին գործոց նախարար Քամալ խարապիի հետ: Կը նախատեսուի, որ պեյճիքացի նախարարը հանդիպումներ ունենայ նաեւ պահպանողական կրօնաւորներու հետ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԼՈՅՍ ՏԵՍԻՒԻ

ՄԱՐՁԻԿ

ԻՍ. ՏԱՐԻ, 2002 ԹԻԻ 4 (238)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԼՈՅՍ ՏԵՍԻՒԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՈՒԹԵԱՆ

«Մարզիկ»ի այս թիւով տեսնել՝

- Խմբագրական-Նուիրումի ձամբով
- Ամրապնդեք բարոյական արժէքները (ԺԵ.) - Յարութ Զեքիճեան
- Մատենայ յարանալի եւ Հ.Մ.Ը.Մ. սկսած հայաբնութեան -Վ. Աւագեան
- Գիրք մը եւ մարտ մը -Յ. Գեղարդ
- Չորհոյրեան սկզբունքը -Վ. Յովհաննէսեան
- Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղը երէկ եւ այսօր - Չարեհ Տէրվիշեան
- Հ.Մ.Ը.Մ.ի սկսած թիւերը կը պատրաստուի համա- Հ.Մ.Ը.Մ.ական Է. Ընդհանուր Բանակումին

Թիւր կ'ընդգրկէ նաեւ ընկերային, սկսած սկսած եւ մանկավարժական բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ: Ստանալու համար դիմել Համազգայինի գրախանութի: Սակ՝ 3000 լ.ո.: